Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագիր 2018թ.

Համայնքների խոշորացումը և համայնքահեն զբոսաշրջային քաղաքականությունը.

խնդիրներ, մարտահրավերներ, քաղաքականություններ

Մխիթար Ռ. Գաբրիելյան
ազգագրագետ

Երևան 2019

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Իրավիճակի նկարագրություն 4
3. Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը 8
3.1 Նպատակ և խնդիրներ 8
3.2 Հետազոտության ժամանակացույցը, մեթոդաբանությունը 10
3.2.1 Փաստաթղթերի ուսումնասիրություն 10
3.2.2 Դաշտային հետազոտություններ 12
4. Արդյունքների վերլուծություն 13
4.1 Պետական քաղաքականությունը. փաստաթղթերի ձևակերպումներն ու փորձագիտական կարծիքները 14
4.1.1 «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ» 16
4.1.2 «ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագիր»-ը և զբոսաշրջության «պատասխանատուները» 19
4.1.3 Օրենքները, տեղական ինքնակառավարումը և կիրարկման հնարավորությունները..... 25
4.2 Համայնքահեն զբոսաշրջություն թե ձևակերպումներ համայնքային փաստաթղթերում..... 27
իրականություն և հիմնախնդիրներ 27
5. Եզրակացություններ 39
6. Առաջարկություններ 41
7. Օգտագործված փաստաթղթերի և ուսումնասիրությունների ցանկ 43
Հավելված 1. Ամփոփ տեղեկատվություն հետազոտված 44
համայնքների մասին 44
Հավելված 2. Հիմնական հետազոտական հարցադրումները 47

1. Ներածություն

ՀՀ իշխանությունները պարբերաբար փորձել և փորձում են *«ճիշտ դիրքավորվել»* տարածաշրջանում ու աշխարհում՝ պետության, տնտեսության, հասարակության ու մշակույթի ներդաշնակ ու ժամանակակից միտումներին համահունչ զարգացում ապահովելու նպատակով:

Կովկասյան տարածաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված, զարգացման ուղու ընտրությունը շատ դեպքերում ընկալվել ու մեկնաբանվել է «հյուսիս-արևմուտք», «ՌԴ-Եվրոպա» ու այլ մոդելների համատեքստում, չնայած որ ՀՀ իշխանությունները պարբերաբար հայտարարել են բազմավեկտոր քաղաքականության մասին:

«Ընտրության» - «դիրքավորման» բաղադրիչները տարբեր ընդգրկման ու ուղղության բարեփոխումներն են, որոնք նպատակ ունեն լավ կառավարումը, կոռուպցիայի մակարդակի նվազումը, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացումը:

Ժամանակակից աշխարհում, մարդկանց շարժունության աննախադեպ աճով, զբոսաշրջության զարգացմամբ ու զբոսաշրջային եկամուտների բարձր տեսակարար կշռով պայմանավորված, ավելի ու ավելի կարևոր է դառնում նաև սեփական հնարավորությունների, պատմության, մշակույթի, լայն առումով՝ գրավչության ճիշտ հանրայնացումը, ինչը ենթակառուցվածքների զարգացածության, սպասարկման ոլորտի ցուցանիշների ու բազմաթիվ այլ իրողությունների հետ ապահովում է զբոսաշրջության զարգացումը:

Բազմաթիվ երկրներ, ձեռնարկելով համաշխարհային զբոսաշրջային ինդուստրիայում ներգրավվելու քայլեր, սկսել կամ սկսում են առաջանցիկ վերափոխումներ, որոնք ներառում են ոչ միայն սպասարկող ենթակառուցվածքները, այլ, լայն առումով՝ մարդուն: Ժամանակակից աշխարհում զբոսաշրջիկներին գրավում են ոչ միայն պատմական հուշարձանները, ժամանցի ու զվարճանքի վայրերը, այլ այդ ամենի կազմակերպման ու ներկայացման որակը, այսինքն՝ մարդկային ներուժը:

Մարդկային ներուժը այն ռեսուրսն է, որը պայմանավորում է նաև հասարակությունների, համայնքների զարգացումները:

Հայաստանում այդ տեսանկյունից հետաքրքիր իրավիճակ ձևավորվեց 2018թ.՝ «Թավշյա հեղափոխության» ընթացքում ու դրանից հետո, երբ նոր իշխանությունները

հայտարարեցին մարդակենտրոն քաղաքականության մասին, փորձելով քաղաքացուն դնել գործընթացների ու գործողությունների հիմքում:

Սա որակապես նոր ու միաժամանակ բարդ իրավիճակ է, քանի որ ենթադրում է առաջին հերթին գործողությունների ու նախաձեռնությունների հիմքում ընկած մտածողության փոփոխություն հասարակական-քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի բոլոր ուղղություններով:

Հետազոտական առաջարկ ներկայացնելու փուլը համընկավ հենց այս շրջանի հետ. «Թավշյա հեղափոխությունը» հաղթել էր ու երկիրը մտնում էր արմատական, երբեմն հակասական ու բաղ վերափոխումների փուլ:

«ԲՀՀ-Հայաստան» հիմնադրամի հայտարարած մրցույթի ուղղությունները բազմաթիվ էին: Հետազոտական թեմայի՝ մեր ընտրությունը գուցե որոշակիորեն դուրս էր մրցույթի թեմատիկ ընդգրկումից: Այն երկու կարևորագույն գործողություններ՝ համայնքների խոշորացումն ու զբոսաշրջության զարգացման ներուժը մարդու, քաղաքացու «դիտանկյունից» ուսումնասիրելու նպատակ ուներ:

Մեր հետազոտական փորձառության ընթացքում գյուղական համայնքը և զբոսաշրջությունը թիրախավորվել են տարբեր տեսանկյուններից: Վերջին տարիներին «թիրախավորումը» կապվում է «Իմ Հայաստան» ծրագրի, ամերիկյան Սմիթսոնյան ինստիտուտի և ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ համայնքահեն ու մարդակենտրոն զբոսաշրջության զարգացման ներուժի ուսումնասիրության հետ, որն իրականացվում էր ՀՀ տարբեր մարզերում, այդ թվում՝ Տավուշի մարզում:

Հետազոտության ընթացքում, բնականաբար, ոչ բոլոր հարցերն է հնարավոր ուսումնասիրել, մինչդեռ դրանք կարևոր են և տեղական ինքնակառավարման և զբոսաշրջության զարգացման տեսանկյունից: Փաստաթղթերի, փորձագիտական կարծիքների ուսումնասիրությունը նույնպես կարևոր նշանակություն ունի, ուստի որոշվեց դիմել հենց նման հետազոտական առաջարկով, նպատակ ունենալով ուսումնասիրել մարդակենտրոն ու համայնքահեն մոտեցումները երկու կարևոր՝ համայնքների խոշորացման ու զբոսաշրջության զարգացման գործընթացներում:

2. Իրավիճակի նկարագրություն

Վերջին տարիներին իրականացված բարեփոխումների շարքում ընդգրկման, ազդեցությունների ու հետևանքների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն վարչատարածքային բարեփոխումները՝ համայնքների խոշորացման գործընթացով[1]:

[1] 2018թ. «թավշյա հեղափոխությունից» հետո գործընթացը ժամանակավորապես կասեցվել է, սակայն, առաջիկայում հավանաբար շարունակվելու է: 09.04.2019թ., հանդիպելով մարզպետների հետ և *«Խոսելով համայնքների միավորման գործընթացում առաջիկա անելիքների մասին՝ նախարար Պապիկյանն արձանագրել է, որ աշխարհագրորեն և տնտեսապես համադրելի համայնքների միավորումը նրանց*

Համայնքների խոշորացման գործընթացը բավականին երկար նախապատրաստվել ու քննարկվել տարբեր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Իրականացվել են նաև նախապատրաստական հետազոտություններ, մշակվել սցենարներ ու տրվել գնահատականներ: Դեռևս 2010թ. գերմանական GTZ կազմակերպության աջակցությամբ իրականացվել է ուսումնասիրություն «ՀՀ Վայոց ձորի մարզում համայնքների խոշորացման և միջամայնքային միավորումների ստեղծման՝ ՀՀ կառավարության հայեցակարգի գործնական իրականացման վերաբերյալ»:[2] Նույն կազմակերպման ֆինանսավորմամբ իրականացվել է նաև «ՀՀ Վայոց ձորի մարզում համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկ»[3]: Նախապատրաստական փուլում զուգահեռ այլ գործողություններ նույնպես իրականացվել են: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքի «Վարչատարածքային բարեփոխումներ. հայեցակարգեր և ուսումնասիրություններ» բաժնում տեղադրված են տարբեր փաստաթղթեր ինչպես նաևխքան համայնքների խոշորացումը, այնպես էլ խոշորացումից հետո իրականացված և շարունակվող գործողությունների վերաբերյալ:[4] Դրանք բավականին մանրամասն ներկայացնում են վարչատարածքային բաժանման փոփոխությունների ու համայնքների խոշորացման նպատակներն ու խնդիրները տարբեր տեսանկյուններից: Միաժամանակ, նույն նախարարության կայքի «Հրապարակումներ վարչատարածքային բարեփոխումների մասին» բաժնում մեծ թիվ են կազմում գնահատականները, կոնկրետ օրինակները, հառջղված փորձի ներկայացումները[5]:

Այս ամենի արդյունքում ընդհանրացված ու ամփոփ ձևակերպումը գտնում ենք *«Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ»-ում, որում* գործընթացի անհրաժեշտությունը ձևակերպված է հետևյալ կերպ.

*«...Կարծում ենք, որ միայն համայնքների խոշորացման դեպքում է հնարավոր լուրջ և էական արդյունքների հասնել **ռեսուրսների կենտրոնացման** և դրանց առավել **արդյունավետ** կերպով*

---

*ինքնուրույնության մղելու և ենթակառուցվածքները զարգացնելու ինստիտուցիոնալ հնարավորություն է ընձեռնում: Այս կապակցությամբ նախարարը հարկ է համարել ևս մեկ անգամ ընդգծել, որ միավորման գործընթացն այլևս իրականացվելու է **հանրային լայն քննարկումների և համայնքների բնակչության ազատ կամարտահայտության սկզբունքով»**:* http://mtad.am/hy/news/item/2019/04/09/mtad09.10/:

[2] Մանրամասն տես՝ http://www.mtad.am/files/docs/600.pdf.

[3] Տես՝ http://www.mtad.am/files/docs/597.pdf

[4]Վարչատարածքային բարեփոխումները Հայաստանում. Միջանկյալ զեկույց քաղված դասերի վերաբերյալ, Եր., 2017, http://mtad.am/hy/hayecakarger/; Աշխատանքային տեղեկանք. Համայնքների խոշորացումը՝ որպես Հայաստանի վարչատարածքային բաժանման օպտիմալացման միջոց, Եր., 2013, http://www.mtad.am/files/docs/774.pdf: Հետազոտություններ ու արդյունքների գնահատումներ իրականացվել են նաև կոնկրետ համայնքների ու կոնկրետ մարզերի օրինակով:

[5] Հիմնական հրապարակումները՝ http://mtad.am/hy/hraparakumner/:

տնօրինման *հարցերում: Այս տարբերակը հնարավորություն կտա նաև խորացնել* ***ապակենտրոնացման քաղաքականությունը*** *՝ նոր կազմավորված խոշոր համայնքներում տեղական* ***ինքնակառավարման մարմիններին վերապահելով առավել մեծ ծավալի լիազորություններով՝*** *մեծացնելով դրանց դերը հանրային կառավարման համակարգում:*

Միաժամանակ չպետք է բացառել միջհամայնքային համագործակցության ձևավորումն ու զարգացումը (այդ թվում միջհամայնքային միավորումների ստեղծումը) խոշոր համայնքների կազմավորման պարագայում: Ավելին, որքան խոշոր և կազմակերպված լինեն համայնքները, մեծ լինեն դրանց լիազորությունների շրջանակներն ու այդ լիազորությունները գործնականում իրականացնելու կարողություններն ու հնարավորությունները, այնքան առավել բարենպաստ միջավայր կարող է ձևավորվել համայնքների միջև տարաբնույթ համագործակցության ծավալման, այդ թվում միջհամայնքային միավորումների ստեղծման համար».[6]

Զևակերպումը, նշելով հնարավոր տարբեր արդյունքներ, դրանք դիտարկում է արդյունավետ կառավարման ու համայնքների (իմա՝ զբոսաշրջային-Մ. Գ.) ռեսուրսների արդյունավետ օգտագործման համատեքստում: Որպես կարևոր խնդիր առանձնացվում է նաև համայնքային լիազորությունների աճը. *ինչպես կտեսնենք նաև զբոսաշրջության կառավարման ու պլանավորման ոլորտում:*

ՀՀ ընդհանուր և մարզերի ու համայնքների համաչափ զարգացմանը, ներուժի արդյունավետ օգտագործմանը, միջազգային մակարդակում ճանաչելիության բարձրացմանը նպաստող կարևոր ուղղություն է նաև զբոսաշրջությունը[7]:

«Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը» սահմանում է հետևյալ նպատակն ու խնդիրները.

«Հայաստանում զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել ոլորտի ներդրումը ազգային տնտեսության ոլորտում, ապահովել համաչափ տարածքային տնտեսական զարգացում՝ միևնույն ժամանակ պայքարելով աղքատության դեմ: Այս ամենը կարելի է իրագործել նպաստելով ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները՝ առաջարկելով ավելի բարձրաժեք զբոսաշրջային արդյունք և ստեղծելով նոր աշխատատեղեր».[8]

---

[6] «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ» (Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման), էջ 12. http://www.mtad.am/files/docs/782.pdf:

[7] ՀՀ-ում Զբոսաշրջության ոլորտի քաղաքականությունն իրականացնում է Զբոսաշրջության կոմիտեն, որը ղեկավարում է Կոմիտեի նախագահը: Այն Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում է, որպես նախարարությանը ենթակա մարմին: ՀՀ-ում զբոսաշրջությունը և զբոսաշրջային գործունեությունը կարգավորվում են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ընդունվել է 2003թ. դեկտեմբերին):

[8] ՀՀ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ (հաստատված է ՀՀ Կառավարության կողմից, 2008թ. փետրվարի 13-ին), էջ 3 http://mineconomy.am/media/2017/03/1454.pdf:

Երկու սահմանման համադրումը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ, ձևակերպված են նման նպատակներ, որոնք կապվում են համաչափ տնտեսական զարգացման և առկա հիմնախնդիրների հաղթահարման հետ:

Այսպիսով, համայնքների խոշորացման գործընթացը և զբոսաշրջության զարգացումը ավելի քան մեկ տասնամյակ ՀՀ իշխանությունների քաղաքականության առաջնահերթությունների թվում են:

2018թ. «թավշյա հեղափոխությունից» հետո պատկերը չի փոխվել: Հայաստանի նոր իշխանությունները շարունակում են կարևորել զբոսաշրջության զարգացումը: Այսպես, ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի 5.7 բաժինը ձևակերպում է «զբոսաշրջային իրավիճակն ու խնդիրները».

*«Ծառայությունների արտահանման ծավալում զգալի մաս են կազմում զբոսաշրջային ծառայությունները: Հայաստանում առկա է **զբոսաշրջության զարգացման զգալի ներուժ և հեռանկար:** Զբոսաշրջության զարգացումը բացառիկ հնարավորություն է **փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:** Այս առումով Կառավարության **անելիքը հստակ է.** զբոսաշրջիկների համար անհրաժեշտ է **ապահովել ենթակառուցվածքներ և սպասարկման բարձր մակարդակ:** Զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով կարևորվելու է օտար լեզուներով ուղեցույցներով, համապատասխան փողոցային և զբոսաշրջային վայրերում նշաններով կահավորումը: Զուգահեռաբար, պետք է առանձնացվեն զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող զբոսաշրջային ենթաճյուղեր՝ **էկոտուրիզմ, գաստրոտուրիզմ, էքստրիմ տուրիզմ, էթնոտուրիզմ՝** համաշխարհային շուկայում Հայաստանը թիրախավորված դիրքավորելու և համապատասխան հետաքրքրություններ ունեցող զբոսաշրջիկների համար մեր երկիրն առավել գրավիչ դարձնելու նպատակով: Կառավարությունը կարևոր է համարում նաև Հայաստանի մուտքի վիզային ռեժիմների ազատականացմանը և օդային տրանսպորտի գների նվազեցմանն ուղղված հարցերի կարգավորումը:»*[9]

Թիրախավորված են նաև տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները.

«Կառավարությունը շարունակելու է ջանքեր գործադրել մարզպետարանների գործունեության արդյունավետության բարձրացման, տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելու, ինչպես նաև վարչատարածքային բարեփոխումների շարունակական ընթացքն ապահովելու ուղղությամբ, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության տարածքներում տնտեսական ակտիվությունը խթանելու, տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով՝ կգործարկվի ներդրումային ծրագրերի հարթակը և կստեղծվի ներդրումների խթանման նպատակով անհրաժեշտ տեղեկատվական հենք.

[9] ՀՀ Կառավարության 2019թ. ծրագիր, Եր., փետրվար 2019, էջ 48. http://www.gov.am/files/docs/3133.pdf:

- կձևավորվեն Հայաստանի Հանրապետության տարածաշրջաններում ոլորտային զարգացման կենտրոններ՝ «տարածքային աճի բևեռներ»՝ նպատակուղղված միաբևեռ, մայրաքաղաքում կենտրոնացած տնտեսությունից դեպի բազմաբևեռ՝ կայուն համաչափ զարգացող տնտեսության անցմանը»:[10]

Փաստորեն, ոլորտային դիտարկված փաստաթղթերը նպատակ ունեն *ապահովել արդյունավետ տարածքային կառավարում և համաչափ տնտեսական զարգացում, համայնքային կազմակերպման ու ինքնակազմակերպման ավելի բարձր մակարդակ ու հնարավորություններ,* ***զբոսաշրջության դեպքում՝*** *ՀՀ ճանաչելիության բարձրացում, համայնքահեն նախաձեռնությունների ակտիվացում, համայնքի զբոսաշրջային, հատկապես մշակութային ներուժի լիարժեք ու համակողմանի օտագործում:*

3. Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը

3.1 Նպատակ և խնդիրներ

Նկարագրված իրավիճակը այն մեկնակետն է, որից սկսվել է հետազոտական հայտի ձևակերպումը և բխել են հետազոտական հիմնական գործողությունները:

«ԲՀՀ-Հայաստան» հիմնադրամի «Քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակների ծրագրի» հավանությանն արժանացած առաջարկը, վերաբերելով համայնքների խոշորացման և զբոսաշրջության զարգացման խնդիրներին, ***նորութային է հետազոտական հարցադրման և մոտեցումների տեսանկյունից:***

Հետազոտության նպատակը միայն ոլորտային քաղաքականությունների ու փաստաթղթերի ուսումնասիրությունը չէ: Այն հետազոտության որակական մեթոդների կիրառմամբ ուսումնասիրում է զբոսաշրջության և համայնքային զարգացման ***համայնքահեն ու մարդակենտրոն բաղադրիչները, դրանց առկայությունը քաղաքականություններում, փաստաթղթերում ու կոնկրետ գործողություններում:***

Սակայն սա միակ նորութային հարցադրումը չէ:

Հետազոտության ընթացքում դիտարկվել են ոչ թե համայնքների խոշորացման ու զբոսաշրջության զարգացման քաղաքականությունների փաստաթղթերի «համայնքահենությունը կամ մարդակենտրոնությունը», այլ այն, թե որքանով են դրանք փոխկապակցվելով, փոխադարձաբար միմյանց լրացնելով, համայնքային ու անհատական շահերը, հետաքրքրություններն ու ներուժը հաշվի առնելով, ***ցուցաբերում համալիր ու համակարգված մոտեցում:***

[10] ՀՀ Կառավարության 2019թ. ծրագիր, էջ 52. http://www.gov.am/files/docs/3133.pdf:

Սա կարևոր է կիրառական տեսանկյունից:

Այսօր հետազոտողը, պետական կառույցները, տեղական ու միջազգային կազմակերպությունները կարիք ունեն հասկանալու,

- ✓ ***թե ինչպես և որքանով է համայնքը ներգրավված զբոսաշրջային ուղղվածության տարբեր գործողություններում.*** *ներուժի բացահայտում, գնահատում և վերլուծություն, մասնակցային ճանապարհով զբոսաշրջության զարգացման որոշումների ընդունում, մոնիտորինգ, լայն առումով՝ մասնակցություն համայնքային զարգացման գործողություններին,*
- ✓ ***ինչպես է զբոսաշրջությունը ներառված հատկապես խոշորացված համայնքների զարգացման և ընթացիկ գործունեության ծրագրային փաստաթղթերի մեջ.*** *համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա ազդեցությունների, այլ ոլորտների հետ փոխկապակցվածության, անհատ, ընտանիք, համայնք հարթություններում ազդեցությունների գնահատում:*

Համայնքի, վերջինիս ներուժի ու հնարավորությունների մասին ամբողջական պատկերացումները կարևոր են նախաձեռնությունների ու գործողությունների պլանավորման, տարբեր ծրագրերի հաջողության ապահովման տեսանկյունից:

Այս ամենի հաշվառմամբ, կիրառվում է համայնք-մշակույթ-զբոսաշրջություն փոխադարձ կապերի ուսումնասիրության մոտեցումը:

Այն, իր հերթին, բխում է հետազոտության նպատակից, որն է՝

խոշորացված համայնքների ծրագրային փաստաթղթերի, դաշտային հետազոտության ընթացքում գրառված նյութերի վերլուծության միջոցով մի կողմից՝ գնահատել զբոսաշրջային ներուժի «ներկայացվածությունը» հետազոտված համայնքների ծրագրերում,

մյուս կողմից՝ առաջարկել լրացուցիչ գործիքներ, որոնք հնարավորություն կտան ներուժը գնահատել ու վերագնահատել մարդահեն ու համայնքահեն զբոսաշրջության զարգացման տեսանկյունից (մարդկային ռեսուրս, արհեստավորներ, ասացողներ, հայտնի վարպետներ, տեղական ավանդույթների գիտակ բնակիչներ, համայնքային տոներ, խոհանոց, բնակարան, երկրագործության, տնտեսություն՝ լայն առումով, տեղական ավանդույթների, սովորույթների, արհեստների ու այլ մշակութային պրակտիկաների ուսումնասիրություն, բացահայտում ու ներառում զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր):

Հետազոտությունը (փաստաթղթերի ուսումնասիրության ու դաշտային հետազոտության բաղադրիչներով), մեծամասամբ ապացուցելով հարցադրումների ու հետազոտական կանխավարկածի հավաստիությունը[11], միաժամանակ արձանագրեց, որ

[11] Որպես հետազոտական կանխավարկած դիտարկվել է այն, որ խոշորացման արդյունքում զբոսաշրջության զարգացման լուրջ ներուժ ու ավանդույթներ ունեցող համայնքներում (մեր ընտրանքում՝Դիլիջան և Արենի) համայնքի կենտրոն դարձած բնակավայրերը ճիշտ պլանավորման ու կառավարման դեպքում կարող են ողջ փնջի համար կատարել զբոսաշրջության զարգացման լոկոմոտիվի դեր:

այս համայնքների ու զբոսաշրջության զարգացման այս փուլում ու առկա միտումների շրջանակում «համայնքահեն ու մարդակենտրոն» նախաձեռնությունները իրապես կարևոր իրողություն են և բխում են այն ընկալումից, որ

ա. համայնքների խոշորացումը այլևս կայացած իրողություն է (հետևաբար պետք է կարևորել համայնքների ակտիվ, առաջանցիկ զարգացման նախաձեռնությունները, որոնք կարող են հաջողության հասնել միայն հիմնական շահառուներին, թիրախ խմբերին որպես սուբյեկտ դիտարկելու, շահառուների մասնակցայնության ինստիտուցիոնալիզացիան առաջնային համարելու պարագայում) և

բ. զբոսաշրջային համաշխարհային ինդուստրիայի զարգացման արդի միտումները հենց մարդկային ու համայնքահեն չափումների կարևորմամբ, լրացուցիչ հնարավորություններ են բացում Հայաստանի Հանրապետության համար: Հետևաբար առավել քան կարևոր է զբոսաշրջությանը ճիշտ բովանդակություն հաղորդելը, հատկապես որոշումների կայացման գործընթացում ապահովելով շահառուների տարբեր խմբերի ակտիվ մասնակցությունը:

Բազմաբնակավայր համայնքներում սա առավել քան կարևոր է, քանի որ բացի հնարավորությունների բացահայտումից, առկա է համադրման ու ավելի բարձր մակարդակի ընդհանրացման անհրաժեշտություն:

Այսօր ՀՀ-ում կա շուրջ 55 խոշորացված համայնք:[1] Դրանցից որոշները ձևավորվել են քաղաքային բնակավայրերի *(Եղվարդ, Չարենցավան, Բյուրեղավան, Վարդենիս, Ճամբարակ, Ապարան, Վայք, Ջերմուկ, Թումանյան, Ախթալա, Ալավերդի, Ստեփանավան, Տաշիր, Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան, Սիսիան, Քաջարան, Կապան, Գորիս, Մեղրի), իսկ մնացածը՝ գյուղերի շուրջ:*

3.2 Հետազոտության ժամանակացույցը, մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է 2018. նոյեմբեր-2019թ. ապրիլ ամիսներին, ունի *երկու բաղադրիչ՝* ***փաստաթղթերի ուսումնասիրություն և դաշտային հետազոտություններ:***

3.2.1 Փաստաթղթերի ուսումնասիրություն

Հետազոտության ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերը (շուրջ 100) խմբավորվում են «ըստ մակարդակի» և ըստ ոլորտների և ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեն արդյունավետ կառավարման, տեղական ինքնակառավարման և համայնքներին խոշորացման ու զբոսաշրջության զարգացման հետ:

Պետական քաղաքականության փաստաթղթեր (օրենքներ, կառավարության ծրագրեր, հայեցակարգեր, այլ փաստաթղթեր)[12]:

Մարզային մակարդակի փաստաթղթեր (մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություններ, տեղական ու միջազգային կազակերպությունների իրականացված ծրագրեր, այլ փաստաթղթեր)[13]:

Համայնքային փաստաթղթեր («Համայնքների 2017-2021թթ. զարգացման ծրագիր», «Համայնքի տարեկան աշխատանքային պլան», «Տեղական տնտեսական զարգացման պլան», «Տարեկան բյուջեի կատարողականի և համայնքի ղեկավարի գործունեության տարեկան հաշվետվություններ»)[14]:

Ուսումնասիրվել են նաև պետական կառույցների, տեղական ու միջազգային կազմակերպությունների հրատարակած նյութերն ու վերլուծությունները, համայնքների խոշորացման դրական և բացասական հետանքների ու ազդեցությունների վերաբերյալ մամուլի հրատարակումները, փորձագիտական կարծիքները[15]:

Փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում կարևորվել են հետևյալ տեսանկյունները.

Ա. Արդյոք *քաղաքականության* փաստաթղթերում առկա են համայնքահեն/մարդակենտրոն զբոսաշրջության և այդ ճանապարհով՝ համայնքների սոցիալ-մշակութային զարգացման, կազմակերպական/ինքնակազմակերպական կարողությունների խթանման դրույթներ: Եթե այո, ապա որքանով են դրանք բխում համայնքների կարողություններից, ինչ մեթոդաբանությամբ են բացահայտված և ինչպես են ներկայացված համայնքի կարողությունները:

Բ. Որքանով են *խոշորացված համայնքների փաստաթղթերում* ներառված համայնքահեն զբոսաշրջության զարգացման դրույթները: Կիրառված են արդյոք մասնակցայնության ու ներառականության չափանիշներ:

Գ. Որքանով են ծրագրերը *մշակութահեն ու մարդակենտրոն,* այսինքն՝ ինչպես է մարդը, ընտանիքը, լայն առումով՝ համայնքը հանդես գալիս որպես լոկալ մշակույթի կրող ու հանրայնացնող և ինչպես է դիտարկվում որպես զբոսաշրջային ինդուստրիայի սուբյեկտ, այլ ոչ թե օբյեկտ:

---

[12] Հղումներով տեքստը չծանրաբեռնելու համար հետայսու որոշ դեպքերում հղում ենք ռեսուրսների խմբի, այլ ոչ թե յուրաքանչյուր ռեսուրսի կոնկրետ էլեկտրոնային հասցեն: *Տես՝ http://www.gov.am/am/gov-program/, http://www.gov.am/am/annual-events/, http://www.gov.am/am/prsp/, http://www.gov.am/am/Five-Year-Action-Program/, http://www.gov.am/am/medium-term/:*

[13] Ըստ հետազոտված մարզերի տես՝ *http://tavush.mtad.am/development-plan/; http://vdzor.mtad.am/.*

[14] Ըստ համայնքների տես՝ *http://vdzor.mtad.am/Zargtsragrer/, http://vdzor.mtad.am/Hamplan/, http://vdzor.mtad.am/Hamaynqnerisoc/; http://tavush.mtad.am/zargacum/; http://tavush.mtad.am/tap/:*

[15] Մանրամասն ներկայացված են ՏԿԶ կայքում՝ *http://mtad.am/hy/hraparakumner/:*

Դ. Ինչպես է հնարավոր փոխկապակցել ու փոխլրացնել զբոսաշրջության ու համայնքների խոշորացման ծրագրերը համայնքահեն, մասնակցային զբոսաշրջության զարգացումը խրախուսելու նպատակով:

3.2.2 Դաշտային հետազոտություններ

Հետազոտության երկրորդ բաղադրիչը դաշտային հետազոտություններն են:

Ընտրանքը ներառել է 4 խոշորացված համայնք 2 մարզում: Տավուշի մարզում ընտրվել են Դիլիջան և Կողբ, Վայոց Ձորի մարզում՝ Վայք և Արենի համայնքները: Ուսումնասիրված խոշորացված համայնքներից երկուսը ձևավորվել է քաղաքների (Դիլիջան, Վայք) և երկուսը՝ գյուղերի շուրջ (Կողբ, Արենի):

Ընտրանքը կառուցելիս հաշվի է առնվել նաև, որ համայնքներից երկուսը՝ Դիլիջան և Արենի, ունեն զբոսաշրջային բավականին լուրջ ներուժ և միաժամանակ ՀՀ զբոսաշրջային շուկայում ակտիվ դիրքավորվում են որպես կարևոր զբոսաշրջային կենտրոններ (գինու փառատոնը Արենիում, գաթայի փառատոնը՝ Խաչիկում, գյուղի տոնը՝ Ռինդում: Դիլիջանի դեպքում՝ տարբեր փառատոնները, տեղական ու միջազգային նախաձեռնությունները):

Համայնքներում և մարզկենտրոններում անցկացվել են փորձագիտական հարցումներ ոլորտային պատասխանատուների, փորձագետների ու պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:[16]

Հետազոտության ընթացքում, բացի հարցումներ անցկացնելուց, մասնակցել ենք նաև Տեղական ինքնակառավարման և զբոսաշրջության զարգացման ուղղվածություն ունեցող միջոցառումների:

Ա. Կողբ համայնքում մասնակցել ենք «Կողբ» հիմնադրամի և «Թումո» կենտրոնի կազմակերպած համատեղ միջոցառմանը, որ վերաբերում էր համայնքում Թումո կենտրոնի կառուցման ընթացքին ու հնարավոր ազդեցություններին համայնքային ու զբոսաշրջային զարգացումների վրա: Այցելել ենք Կողբի թանգարան՝ զբոսաշրջային տեսանկյունից հնարավորությունները գնահատելու նպատակով:

Բ. Դիլիջանում մասնակցել ենք UWC դպրոցի աշակերտների ջանքերով կազմակերպված «Արվեստների փառատոնին», ինչպես նաև ճանաչողական հանդիպում ենք ունեցել «Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն»-ի աշխատակիցների հետ:

---

[16] Դիլիջանում և Վայքում՝ քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի, Կողբում՝ համայնքի ղեկավարի, Արենիում՝ աշխատակազմի տեղական տնտեսական զարգացման և զբոսաշրջության պատասխանատուների հետ: Փորձագիտական հարցում է անցկացվել նաև ՀՀ Վայոց ձորի փոխմարզպետ Ն. Ասատրյանի և ոլորտի փորձագետ, Վայոց ձորի մարզի զբոսաշրջային հիմնախնդիրների գիտակ և ոլորտում ծառայություններ մատուցող Շ. Միքայելյանի հետ: Որոշ դեպքերում հարցման մասնակիցները առարկություններ են ունեցել զրույցը ձայնագրելու հետ կապված: Նման դեպքերում հղումները ներկայացվելու են որպես անհատական խորացված, այլ ոչ թե փորձագիտական հարցազրույց: Հարցազրույցի ուղեցույցը տես՝ *Հավելված 2-ում:*

Գ. Տավուշի մարզպետարանի «Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության» բաժնի վարիչի հրավերով 2019թ. ապրիլի 6-ին մասնակցել ենք ՄԱԶԾ Տավուշի զբոսաշրջության զարգացման և հետազոտության կենտրոնում կայացած «ՀՀ Տավուշի մարզպետարանին կից Զբոսաշրջության զարգացման աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը», ընդգրկվելով աշխատանքային խմբում: Ապրիլի 13-ին մասնակցել ենք աշխատանքային խմբի երկրորդ հանդիպմանը, ներկայացնելով ինչպես հետազոտության նախնական արդյունքները, այնպես էլ ձեռք բերելով հետագա համագործակցության ու հետազոտության արդյունքների հանրայնացման վերաբերյալ որոշ պայմանավորվածություններ:

Այս հանդիպումների ընթացքում կատարել ենք որոշ դիտարկումներ, որոնցից որոշները նույնպես ներառված են վերլուծությունում:

Իրականացված հետազոտական գործողությունները բավարար են առաջարկում ձևակերպված խնդիրների լուծման ու առաջարկությունների ներկայացման համար:

4. Արդյունքների վերլուծություն

Հետազոտությամբ, ինչպես և ենթադրում էինք, բացահայտվեցին խնդիրներ տարբեր մակարդակներում՝ պետական քաղաքականության փաստաթղթեր, տեղական ինքնակառավարման և զբոսաշրջության ոլորտները կարգավորող փաստաթղթեր:

Փորձագիտական հարցումների, քննարկումների ընթացքում բացահայտվեց խնդիրների ևս մեկ խումբ, կապված խոշորացված համայնքների ինստիտուցիոնալ հնարավորությունների հետ. *կոնկրետ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական, մարդկային, մասնագիտական, ֆինանսական և այլ ռեսուրսների պակաս:*

Խնդիրների այս երկու պայմանական մակարդակները (իրականում դրանք փոխկապակցված են) պայմանավորեցին նաև արդյունքների վերլուծության կառուցվածքը. ներկայացնել այնպես, որ հնարավոր լինի խնդիրները դիտարկել փոխադարձ կապվածությունների մեջ:

Ծավալների հետ կապված բարդություններից խուսափելու նպատակով որոշվեց, որ վերլուծվելու են ոչ թե բոլոր փաստաթղթերը կամ փաստաթղթերի՝ զբոսաշրջության ու տեղական ինքնակառավարման հետ կապ ունեցող բոլոր դրույթները, այլ միայն այն դրույթները, թեզերն ու ձևակերպումները, որ ուղղակի կապ ունեն հետազոտության նպատակների ու խնդիրների հետ և միաժամանակ, կարող են օգտագործվել առաջարկություններ մշակելիս: Ըստ այդմ, այս մոտեցմամբ, փաստաթղթերի դրույթները, ձևակերպումերն ու պահանջները, ինչպես նաև փորձագիտական մոտեցումներն ու կարծիքները վերլուծվում են զուգահեռ:

Մարդակենտրոն, համայնքահեն մոտեցումները ժամանակակից աշխարհում ոչ միայն սոցիալ-մշակութային, այլ տնտեսական ու քաղաքական զարգացումները պայմանավորող, դրանց արագություն, որակ ու բովանդակություն հաղորդող կարևորագույն իրողություններ են: Դրանք ձևավորվում են որպես տարածքի ու տարածքում բնակվող մարդկանց հանդեպ վերաբերմունքի յուրօրինակ դրսևորում և արդյունք: Ժամանակակից աշխարհի դինամիկ զարգացող, սոցիալական բարձր շարժունություն ու բարձր կենսամակարդակ ապահոված հասարակությունները մարդակենտրոն, մարդուն որպես կարևորագույն արժեք ու քաղաքականությունների սուբյեկտ դիտարկող հասարակություններն են: Միևնույն ժամանակ, հաջողության, առաջանցիկ զարգացումների ապահովումը կախված է նաև այն հանգամանքից, թե որքանով և ինչպես են հասարակությունները զուգակցում անհատականն ու խմբայինը:

Հետազոտությամբ բացահայտված խնդիրները արտահայտված են մի քանի մակարդակում.

- *Պետական քաղաքականության փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի, նախատեսվող միջոցառումների վերաբերյալ օրենսդրական դաշտում, ինչպես օրինակ՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներում առկա է հակասականություն, կան ոչ հստակ ձևակերպումներ:*
- *Տեղական ինքնակառավարման մակարդակում առկա է և որոշակի հակասականություն և ներուժի ու հնարավորությունների անհամապատասխանություն՝ առաջադրված խնդիրների լուծման տեսանկյունից, մյուս կողմից՝ կա ցուցումների, մեթոդական-ուղեցույցների, վերապատրաստումների կարիք:*
- *Այս ամենը բերում է նրան, որ որոշակի հակասականություն է առկա նաև համայնքների խոշորացման և զբոսաշրջության զարգացման գնահատականներում ու ընկալումներում՝ ինչպես փորձագիտական հանրույթի, այնպես էլ բիզնես սեկտորի մոտ: Մի կողմից, գրեթե բոլորը նշել են, որ առկա է զբոսաշրջության զարգացման հսկայական ներուժ և համայնքների խոշորացումը կնպաստի այդ ներուժի արդյունավետ իրացմանն ու համայնքային զարգացումներին ծառայեցնելուն, մյուս կողմից՝ նշվում է, որ իրականությունը փոքր-ինչ այլ է: Իրականում առկա են բազմաթիվ խնդիրներ (անորոշությունից մինչև հարկային ու այլ փոփոխությունների անկանխատեսելիություն), որոնց լուծումը միայն կապահովի մի կողմից խոշորացված համայնքների և մյուս կողմից՝ համայնքահեն ու մարդակենտրոն զբոսաշրջության զարգացումը:*

Փորձագետները խնդիրների այս խմբերը հստակ արձանագրել են բոլոր հարցազրույցների ընթացքում:

Վայք համայնքի օրինակով խոշորացման դիպուկ գնահատականներից մեկը ներկայացրեց Շ. Միքայելյանը.

Խոշորացում – կողմ ենք ու դեմ: Փոքր համայնքներ են, շատ փոքր: Առանձին ղեկավար, աշխատակազմ պահելն իմաստ չուներ: Եվրոպայի փորձով տեղեր կան, որ 30-40 համայնք կենտրոնացված է: Կառավարումը տեղեկատվական տեխնոլոգիաների դարում բացարձակ խնդիր չէ: Ազատեկի բնակիչը պետք չի, որ գա հասնի ըստեղ: Կան բնակավայրերի պատասխանատուներ: Սոցիալ-տնտեսական առումով ոչ պլյուս է, ոչ մինուս, որովհետև գյուղացին չի փոխվել, նույնն է մնացել: Աշխատողն աշխատում է, չաշխատողը չի աշխատում: Իրա համար կապ չունի ղեկավարը կողքն է նստած, թե Վայքում, 7 կմ էս կողմ: Երկրորդ պրոբլեմը ընտրություններն են – գյուղը բաժանվում էր մասերի, քայքայվում էր: Էս անգամ մի հոգու կընտրեն ու չեն թշնամանա իրար հետ: Մեր մոտ սաղն էլ փոքր են, Վայքն էլ է փոքրիկ քաղաք: Շ. Միքայելյան, փորձագիտական հարցազրույց, Վայոց ձորի մարզ:

Արենի խոշորացված համայնքում, ընդունելով բարդությունների փաստը, միաժամանակ փորձագետները արձանագրում են նաև դրական որոշ փոփոխություններ. *«Համայնքային համագործակցություն – բնակիչների մոտ դեռևս կա իմ ու քո գյուղ հասկացությունը, բայց համեմատած ուրիշ համայնքների հետ, մեր մոտ երևի ավելի հեշտ լուծելի է, մարդիկ իրար նման են, իմ ու քո գյուղը կամաց-կամաց կվերանա: 11 ավագանի ունենք, առաջին նիստերի ժամանակ 10 ավագանին, եթե խնդիրը Չիվային էր վերաբերում, դառնում նայում էին նրան: Էսօրվա դրությամբ հասել ենք նրան, որ արդեն Ռինդը կարող է նույնպես մասնակից լինել Չիվային հողի հատկացումների վերաբերյալ քննարկումներին: Մարդիկ հասկանում են, որ բյուջեն մի տեղից է կառավարվում, բայց բոլորինն է: Մեր համայնքը ճանաչվեց լավագույն համաչափ զարգացող խոշորացված համայնք: Զ. Հարությունյան, Ն. Գրիգորյան, փորձագիտական հարցազրույց, Վայոց ձորի մարզ»:*

Դիլիջան խոշորացված համայնքում խնդիրները կապվում են ոչ միայն քաղաքի ու գյուղական համայնքների զարգացման որոշակի տարբերությունների, այլ այն իրողության հետ, որ համայնքի մեջ մտնող գյուղերից Խաչարձանը, Աղավնավանքն ու Հովքը բնակեցված են Ադրբեջանից հայ փախստականներով, որոնք ոչ միայն ունեն որոշակի մշակութային տարբերություններ այլ համայնքների համեմատությամբ, այլ ունեն նաև ներքին որոշակի տարբերակումներ: *«Խաչարձանում և Աղավնավանքում հիմնականում փախստականներ են բնակվում: Երբ քննարկում էինք համայնքների կարիքները, Աղավնավանքի բնակիչները մի քանի զրուցարան ուզեցին, իսկ Խաչարձանցիները՝ չուզեցին: Ինչու: Որովհետև աղավնավանքցիները հիմնականում նախկին քաղաքաբնակներ են ու զրուցարանը քաղաքային մշակույթի մաս է, իսկ խաչարձանցիները՝ նախկին գյուղաբնակներ, որոնց համար կարևոր են գյուղատնտեսական աշխատանքները: Գործից հետո նրանք արդեն նախընտրում են տուն գնալ, որ հանգստանան: Անհատական խորացված հարցազրույց, Դիլիջան, Տավուշի մարզ»:*

Օրինակները ցույց են տալիս, որ համայնքների խոշորացման գործընթացը գնահատելիս անպայման պետք է հաշվի առնել «մշակութային չափումը», որը կարող է

արտահայտվել մանրուքներում, առաջին հայացքից անկարևոր դետալներում, սակայն պայմանավորել տարբեր ծրագրերի ու գործողությունների հաջողությունը:

Ընկալումների որոշակի հակասականություն առկա է նաև համայնքներում զբոսաշրջության զարգացման հետ կապված.

> ***Պետք է կառավարության մակարդակով կանոնակարգված լինի: Զբոսաշրջիկին անպայման Գառնի ենք տանում, բայց հանրապետությունը պետք է ճիշտ քարտեզագրված ու ուսումնասիրված լինի, որ հասկանանք, թե ինչ ենք առաջարկում ու ինչպես ենք առաջարկում: Ն. Գրիգորյան, փորձագիտական հարցում, Վայոց ձորի մարզ:***

Փորձենք հասկանալ, թե ինչու են փորձագետները ներկայացնում այս կարծիքները, ինչով են դրանք պայմանավորված և ինչից են բխում:

Դիտարկենք այն հիմնական փաստաթղթերը, որ պայմանավորում / նախանշում են զբոսաշրջության զարգացումը և միաժամանակ, ազդում համայնքի զարգացումների հնարավոր ուղղությունների վրա: Ազդեցության առումով հիմնական փաստաթղթերն են ***«Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (տասնյակ փոփոխություններով ու լրացումներով), «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը*** *(մասնավորապես Զբոսաշրջության կոմիտեին վերաբերող՝ 2018թ. փոփոխությունները),* ***օրենսդրական այլ փոփոխություններ ու նախաձեռնություններ, որ կապ ունեն ոլորտի հետ:***

4.1.1 «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ»

ներկայացնում է ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման տեսլականը, քաղաքականություններն ու հիմնական ուղղությունները:

Ընդունված լինելով տարիներ առաջ, «Հայեցակարգ»-ը կարիք ունի փոփոխությունների ու վերաձևակերպումների, նոր զարգացումների տրամաբանությանը համապատասխանեցվելու, հատկապես երբ դիտարկում ենք համայնքահեն զբոսաշրջության զարգացման խնդիրները:

Այսպես, «Համայնքների զարգացում» կետում նշվում է, որ *«Զբոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է նպաստել համայնքների զարգացմանը: Զբոսաշրջիկների համար համայնքային բնակիչների կողմից կազմակերպած միջոցառումները կամ տոները, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են համայնքի սոցիալական աշխուժությանը, իսկ զբոսաշրջության ստեղծած աշխատատեղերը և դրանց արդյունքում եկամուտները հանդիսանում են տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելու մեծ խթան»:*

Ինչու ենք անհրաժեշտ համարում ձևակերպման փոփոխությունն ու վերանայումը:

Այն, կարևորելով համայնքի մասնակցությունը զբոսաշրջային գործողություններին, հիմնված է *համայնքի, այդ թվում՝ խոշորացված համայնքի մեխանիկական ընկալման վրա, քանի որ.*

- կարևորվում, առաջնային են համարվում *միանգամյա, մեխանիկական միջոցառումները, այլ ոչ թե զբոսաշրջությունը համայնքային կյանքի կարևոր մաս դարձնելու խնդիրն այն դեպքում, երբ Հայաստանը, ունենալով գյուղական/ազգագրական կամ էթնիկ զբոսաշրջության լուրջ ներուժ, պետք է խրախուսի հենց այս ուղղությունը*[17]*:*

Համայնքներում փորձագետները արդեն ավելի կոնկրետ օրինակներով են հիմնավորում զբոսաշրջության հայեցակարգային ընկալումների փոփոխության անհրաժեշտությունը.

«Երևանում կարող է զբոսաշրջությունն ավելանում է ու օգուտ տալիս: Բայց երևանցիք ու տուրօպերատորները տուրիստի ջերերը մաքսիմում դատարկում են, նոր բերում մարզ: Ըստեղ հուշարձանը արագ-արագ ցույց են տալիս, նստեցնում ավտոբուսները: Մկի չեն թողնում, որ տեղերում հաց ուտեն, որ փող չծախսեն: Ավտոբուսում, լանչ-բոքսերից արագ ուտում են, գնում: Համայնքին կամ մարզին ինչ: Էդ տիպի զբոսաշրջությունը համայնքին վնաս է տալիս, մենակ զիբիլն է ավելանում, որովհետև մեքենաներում ուտում են, թափում, գնում, իսկ համայնքին մնում է միայն աղբահանությունը»: (անհատական խորացված հարցազրույց, Տավուշի մարզ):

Զբոսաշրջային «երևանակենտրոն, ոչ համայնքահեն մոդել»-ի առաջացրած բարդությունների մասին խոսել են նաև այլ համայնքներում:

Վայքում իրավիճակը ներկայացվեց հետևյալ կերպ.

«Էսօր շատ սխալ քաղաքականություն է տարվում: Հայաստան այցելողները հիմնականում տարեց մարդիկ են: Էդ մարդկանց հոգնացնում են: Հայաստանում տարբեր բարձրություններ են, իսկ դա տարեց մարդկանց համար վտանգավոր է: Տուրիստների շարժը շատ սխալ է. մեկ օրում տանում են Գորիս, Խնձորեսկ ու ետ են տանում Երևան: Բացի հեռավորությունից, ազդում է գոտիականությունը. 800մ-ից բարձրանում են 2700 մ, հետո իջնում 900 մետր: Չեն ուզում պահեն, օգտվեն ձորի օբյեկտներից, հաճախ լանչ-բոքսերով իրանց ուտելիքը բերում են Երևանից:

Հաջորդը. ինչի են հետ տանում: Նույն հյուրանոցային սենյակը, որ մեր մոտ արժի 20000 ու մենք տալիս ենք 20 տոկոս միջնորդավճար, Երևանում մի սենյակից ինքը 15000 միջնորդավճար ունի, դրա համար տատիկին տանում է Երևան: Շ. Միքայելյան, փորձագիտական հարցազրույց, Վայոց ձորի մարզ:»

Փորձագիտական կարծիքներն ու «Հայեցակարգ»-ի դրույթները, ինչպես տեսնում ենք, հակասության մեջ են, քանի որ մարզային փորձագետները, զբոսաշրջության պատասխանատուներն ու ծառայություններ մատուցողները կարևորում են ոչ թե

[17] Որպես ուղղություններ ներկայացված են նաև ՀՀ Կառավարության 2019թ. ծրագրում:

այցելությունները, միանգամյա հյուրասիրությունները, «երևանակենտրոն» զբոսաշրջությունը, այլ զբոսաշրջության զարգացման նոր մոդելի զարգացումը կամ խրախուսումը, որը, ըստ էության, պետք է լինի *համայնքահեն ու մարդակենտրոն և բխի համայնքների զարգացման ներուժից ու հնարավորություններից:*

Ուսումնասիրված համայնքներից նման մոդելը / մոտեցումը աստիճանաբար զարգանում է Արենիում, շնորհիվ այն բանի, որ այստեղ ամեն տարի կազմակերպվում է «Գինու» փառատոնը: Այն որոշ դեպքերում սկիզբ է դնում շարունակական համագործակցությունների, որոնք երկուստեք հիմնված են բիզնես-շահի ու հետաքրքրությունների վրա:

«Փառատոնի արդյունքում ընդլայնվում է բիզնես համագործակցությունը՝ թե տնայնագործական, թե գործարանների ներկայացման առումով: Այս դեպքում ֆորմատը մի քիչ այլ է, կա համագործակցության, միայն առևտուրը չէ: Վերջին տարիներին գալիս են մասնագետներ հետագա համագործակցության նպատակով ու դա արդյունավետ է նաև գովազդի համար: Արենի գինու հեղինակությունը վերջին տարիներին սկսել էր անկում ապրել, ով ինչ արտադրում էր, անունը դնում էր Արենի: Իսկ հիմա արդեն լավ արտադրողները ավելացնում են «Արենի» գինու արտադրությունը: 2017-2018թթ. Վահե Քյոշկերյանի և տեղի բնակչի համագործակցության արդյունքում ստեղծվել է «Վայն քյուբ»՝ գինու համտեսի տարածք: Գյուղի բնակիչը որակյալ արտադրանք է ունեցել ու արդեն համագործակցում են: Առաջին նախադեպն է, որ հենց այգու մոտ համտես են անում, շշալից են անում, բրենդ են արել:

Համտեսի սրահները ընդհանրապես նոր հոսքեր են բերում: Համայնքի նկատմամբ հետաքրքրությունն է մեծանում: Միայն փառատոններին չեն գալիս: Հիմա մեկ ուրիշ նախագիծ էլ ունենք՝ Աղավնաձորում խաղողօրհնեքի օր անենք, որ մարդիկ գնան, որ տեսնեն նաև Մոմիկի գերեզմանատունը, հին գյուղատեղին, դրանք գումարվեն տոնին ու ավելի ճանաչելի դառնան: Համայնքի համար լուրջ գովազդ է նաև Թուֆենկյանների հյուրանոցը, միտված տնտեսության զարգացմանը: Զ. Հարությունյան, Ն. Գրիգորյան, փորձագիտական հարցազրույց, Վայոց ձորի մարզ»:

Փորձագիտական մոտեցումները, ըստ բերված օրինակների, տարբերվում են հայեցակարգային մոտեցումներից: Փորձագետների համար կարևորը շարունակականության և համագործակցայնության սկզբունքն է այն դեպքում, երբ հայեցակարգում ըստ էության, կարևորվում են միանգամյա կամ կարճաժամկետ գործողությունները:

Հասկացությունները, հատկապես պետական քաղաքականության տարբեր փաստաթղթերում կարևոր են, քանի որ շատ դեպքերում կոնկրետ ուղենիշների դեր են խաղում այլ մակարդակներում ևս. դրանք անցնում են ոլորտային քաղաքականության,

տեղական ինքնակառավարման մարմինների փաստաթղթեր, դրվում գործողությունների ու միջոցառումների հիմքում:

Հայեցակարգը փորձ է արել լուծել նաև հասկացությունների խնդիրը, անդրադառալով զբոսաշրջության՝ մշակութային տեսանկյունից կարևորությանը.

«1. Մշակույթի և ավանդույթների վերագնահատում – զբոսաշրջությունը կարող է մեծապես ազդել մշակութային և պատմական ավանդույթների վերականգնմանը, պահպանմանն ու փոխանցմանը, ինչը հաճախ իր հերթին նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը, ազգային ժառանգության պահպանմանը, մշակույթի, արվեստի և արհեստագործության զարգացմանը»:

Այս ձևակերպումը, սակայն, չի արտացոլում ամբողջ իրականությունն ու մշակույթի՝ որպես համակարգի բազմազանությունը. այն ընդհանրական է, չկա հասկացությունների և դրանց բովանդակության հստակեցում ու մեկնաբանություն, հետևաբար հնարավոր չէ հասկանալ, թե ինչ նշանակություն ունեն *«մշակույթ, պատմական ավանդույթ, ավանդույթների վերականգնում, պահպանում ու փոխանցում»* հասկացությունները, որոնք բազային լինելով համայնքահեն զբոսաշրջության համար, միաժամանակ լուրջ մոտեցում պահանջող հասկացություններ են, քանի որ պայմանավորում են հասարակական հարաբերությունների ու տնտեսական զարգացումների համակարգերն ընդհանրապես:

Հայեցակարգի առանձին դրույթների ու ձևակերպումների այս վերլուծությունը պատահական չէ:

Զբոսաշրջության զարգացումը որպես առաջնահերթություն դիտարկելը բերել է նրան, որ քաղաքականության փաստաթղթերում ներառվել են կոնկրետ դրույթներ, գործողություններ ու անելիքներ, որոնցից որոշները ուղղակիորեն կապ ունեն նաև համայնքների ու տեղական ինքնակառավարման հետ:

4.1.2 «ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագիր»-ը և զբոսաշրջության «պատասխանատուները»

Զբոսաշրջային քաղաքականության, նպատակների, խնդիրների ու ակնկալվող արդյունքի ընդհանրացված ու ամփոփ ձևակերպում տեսնում ենք այս ծրագրում.

«Համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության շարունակական բարձրացման միջոցով ՀՀ Կառավարությունը ձգտելու

է ապահովել զբոսաշրջիկների թվի շարունակական բարձր աճ և համաչափ բաշխվածություն ամբողջ հանրապետությունում»:[18]

Համաչափ բաշխվածության դրույթն ուղղակի կապ ունի խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ և, ինչպես տեսանք, որպես հիմնական խոչընդոտ առանձնացվում է փորձագետների կողմից:

Այս և այլ նպատակներին հասնելու միջոցառումները բազմաթիվ են.

«ՀՀ կառավարությունը նպատակադրվում է 2017-2022 թվականներին իրականացվելիք քայլերի և միջոցառումների արդյունքում տարեկան զբոսաշրջային այցելությունների թիվը հասցնել առնվազն 3 միլիոնի: Այս նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.[19] *՝*

1. Զբոսաշրջության ոլորտը կարգավորող իրավական դաշտը կատարելագործելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է.

- մինչև 2019թվականի ավարտը ներդնել զբոսաշրջության ռեգիստրը:

-մինչև 2020թ. ավարտն ավարտել հանրապետության տարածքում ժամանակակից զբոսաշրջային տեղեկատվական միասնական ցանցի ստեղծման աշխատանքները:

Հայաստանի ճանաչելիությունն ակտիվացնելու, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացումն ապահովելու, վիճակագրական տեղեկատվական համակարգը կատարելագործելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

- 2017-2022 թվականների ընթացքում պետական աջակցություն ցուցաբերել ՀՀ մարզերում ամենամյա ավանդական փառատոնների, տոնակատարությունների և այլ զբոսաշրջային միջոցառումների կազմակերպմանը.

- 2017-2022 թվականների ընթացքում ընդլայնել մարզական զբոսաշրջությունը ՀՀ-ում միջազգային մրցաշարերի կազմակերպման միջոցով.

-2017-2022թվականների ընթացքում ամրապնդել, զարգացնել և խթանել համաշխահային շուկայում Հայաստանի՝ որպես ապահով և զբոսաշրջության համար գրավիչ երկրի նկարագիրը.

-մինչև 2018 թվականի ավարտը կատարելագործել զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդը՝ նախադրյալներ ստեղծելով «Զբոսաշրջության սատելիտային հաշիվ» համակարգի ներդրման համար.

-մինչև 2020 թվականի ավարտն ընդունել էկոտուրիզմի զարգացման հայեցակարգը:[20]

---

[18] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր. *2017-2022; 3.1 Տնտեսության առաջընթաց, գործարար միջավայր և զբոսաշրջություն, էջ 45:*

[19] Ներկայացնում ենք միայն այն միջոցառումները, որ ուղղակի կապ ունեն հետազոտության հետ:

[20] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր. *2017-2022; 3.1 Տնտեսության առաջընթաց, գործարար միջավայր և զբոսաշրջություն, էջ 51-52:*

Ուղղությունները և միջոցառումները բազմաթիվ են: Սակայն դրանց նախնական դիտարկումը թույլ է տալիս արձանագրել որոշակի հստակության հետ կապված որոշ խնդիրներ: Միաժամանակ, բացակայում են չափման, արդյունավետության գնահատման մեխանիզմները:

Ավելին, անհամաչափ են ներկայացված մարզերը, չնայած զբոսաշրջային հոսքերի համաչափ բաշխումը հայտարարված է գերակա խնդիր: Մարզերը թիրախավորված են ընդամենը մեկ կետում. «փառատոնների, տոնակատարությունների և այլ զբոսաշրջային միջոցառումների կազմակերպում», որոնց արդյունավետությունը՝ շարունակական ազդեցության տեսանկյունից, փորձագետները բավականին ցածր են գնահատում:

Համաշխարհային միտումները ցույց են տալիս, որ զբոսաշրջության տարբեր ուղղությունների հաջողությունը կախված է արդյունավետ քաղաքականությունից: Որպես կանոն, սրանում ոչ երկրորդական դեր են խաղում իշխանությունները, որոնք հաճախ լուրջ ֆինանսական միջոցների ծախսելով, դիվանագիտական ու այլ խողովակներն օգտագործելով հանրահռչակում են սեփական երկիրը՝ զբոսաշրջային գրավչության շետադրմամբ և ըստ այդմ ապահովում զբոսաշրջիկների կայուն հոսքեր: Կովկասյան տարածաշրջանում նման ակտիվ քաղաքականություն վարում է Վրաստանը:

Հայաստանում ևս այս ուղղությամբ աշխատանքներ իրականացվում են և դրանց շարքում պետք է դիտել 2018թ. մարտի 23-ի՝համապատասխանեցման նպատակով, կատարված փոփոխությունները *«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքում:*[21] Դրանք վերաբերում են հիմնականում Զբոսաշրջության կոմիտեին, վերջինիս նախագահին ու գործառույթներին, այսինքն՝ ինստիտուցիոնալ պատասխանատվությանն ու պատասխանատուներին:

Ըստ այդմ, ի թիվս այլ գործառույթների (առանձնացված են միայն հետազոտության հետ ուղիղ կապ ունեցող կետերը),

«Կոմիտեն՝

6) տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկություններ է ներկայացնում դրանց տարածքում գտնվող զբոսաշրջային տարածաշրջանների, կենտրոնների և օբյեկտների վերանորոգման, բարեկարգման և պատշաճ վիճակում պահպանման վերաբերյալ.

*10) **վարում է զբոսաշրջության ոլորտի վարչական վիճակագրությունը (ռեգիստրը).***

11) իրականացնում է զբոսաշրջության ոլորտի քաղաքականության մշակման համար անհրաժեշտ հետազոտություններ և վերլուծություններ.

[21] Տես «ՀՀ Օրենքը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ Օրենքում փոփոխություններ կատարելու մասին»: *Տես՝* http://parliament.am/legislation.php?sel=show&ID=6381&lang=arm:

18) համակարգում է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող կամ ֆինանսավորվող՝ զբոսաշրջությանն առնչվող աջակցության ծրագրերը կամ ծրագրերի այն մասերը, որոնք պարունակում են զբոսաշրջության բաղադրիչ, ինչպես նաև վերահսկում է դրանց կատարման ընթացքը.

22) իրականացնում և համակարգում է զբոսաշրջության ոլորտի զարգացման աշխատանքները.

26) ձևավորում և վարում է զբոսաշրջային տեղեկատվական բազան.

27) շահառուներին է տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն».[22]

Առանձնացված կետերը, համայնք-զբոսաշրջություն շղթայի վրա ուղղակի ազդեցություն ունենալով, միաժամանակ հերթական անգամ ցույց են տալիս հասկացությունների, գործողությունների, խնդիրների լուծման հետ կապված ընկալումների հակասականությունը:

Կետ 6-ում, որը վերաբերում է *«տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկություններ» ներկայացնելուն,* հստակ չէ, թե որքանով են կատարման համար պարտադիր առաջարկությունները: Մյուս կողմից, հստակ չէ, թե ինչի հիման վրա են մշակվում առաջարկությունները: Հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանում լուրջ խնդիր է զբոսաշրջային ներուժի քարտեզագրումը, իսկ «*զբոսաշրջային տարածաշրջանների, կենտրոնների և օբյեկտների վերանորոգման, բարեկարգման և պատշաճ վիճակում պահպանման վերաբերյալ»* առաջարկություններ ներկայացնելու համար անհրաժեշտ է տիրապետել ամբողջական տեղեկատվության, որն ուղղակի բացակայում է: Հետևաբար, անհասկանալի է մնում, թե ինչպես և ինչ տեղեկատվական բազաների վրա հիմնվելով պետք է ներկայացվեն այդ առաջարկությունները:

Հաջորդ, ոչ պակաս կարևոր խնդիրն այն է, թե ինչու դրանք պետք է ներկայացվեն տեղական ինքնակառավարման մարմիններին այն դեպքում, երբ վերջիններս շատ դեպքերում իրավական տեսանկյունից չունեն ազդեցության լծակներ իրենց տարածքում գտնվող տարբեր միավորների վրա. *օրինակ՝ զբոսաշրջային տեսանկյունից գրավիչ եկեղեցիներ և վանքեր, որ գտնվում են Հայ Առաքելական եկեղեցու տնօրինման ներքո, բնության հուշարձաններ, ազգային պարկեր, որ համայնքի տարածքում են, բայց դուրս են համայնքային ենթակայությունից, մասնավոր սեփականության օբյեկտներ, որոնց վրա համայնքները լուրջ ազդեցություն չեն կարող ունենալ և այսպես շարունակ:*

Կետ 11-ը ևս կարիք ունի հստակեցումների: Վերջին առնվազն մեկ տասնամյակում ՀՀ-ում կարևորվել է «գիտելիքահեն տնտեսության ձևավորումն» ու «գիտական արդյունքի ապրանքայնացումը»՝ որպես ՀՀ զարգացման կարևոր նախապայման: Ըստ այդմ, առաջնային է համարվել հետազոտական պատվերի «պատվիրակումը» գիտակրթական

[22] Նույն տեղում:

հաստատություններին: Այս գաղափարը շարունակում է կարևորվել նաև ներկա իշխանությունների կողմից: ՀՀ Կառավարության 2019թ. ծրագրում, մասնավորապես, նշվում է, որ *«Գիտության ոլորտում անհրաժեշտ է բարձրացնել գիտության ֆինանսավորման արդյունավետությունը, տրամադրվող միջոցներն ուղղել երկրի տնտեսության կարիքներից բխող և գիտական հետազոտությունների արդի պահանջներին համապատասխանող ուղղություններին».*[23] Զբոսաշրջության կոմիտեն, ելնելով իր գործառույթների բնութագրից ու ներկայիս կառավարության հռչակած գերակայությունների տրամաբանությունից, չպետք է զբաղվի *համակողմանի ուսումնասիրություններ կատարելով,* այլ պետք է դրանք պատվիրի համապատասխան հաստատություններինն. *ՀԿ-ներ, համալսարաններ, ակադեմիական հիմնարկություններ, անկախ հետազոտական կենտրոններ*:

Ըստ այդմ, հակասության հաղթահարման տարբերակներից մեկը «Օրենք...»-ի համապատասխան դրույթի փոփոխության օրենսդրական նախաձեռնությունն է, ինչը թույլ կտա մի կողմից, հստակեցնել կոմիտեի լիազորությունները ժամանակակից միտումների հաշվառմամբ և մյուս կողմից՝ «բեռնաթափել» Կոմիտեի պատասխանատվության ոլորտները:

Այս տրամաբանության շրջանակներում հարկավոր է վերանայել նաև ***կետ 6-ը:*** Ըստ այդմ, Կոմիտեն պետք է առաջին փուլում հավաքագրի, ամփոփի ու մշակի ամբողջական տեղեկատվություն, ինչից հետո նոր միայն ունենա *«շահառուներին անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորություն»* ***(Կետ 27):***

Հետազոտությունը ցույց տվեց, որ բացի «զբոսաշրջային տեղեկատվության» ոլորտում առկա բարդություններից, կա նաև դաշտում գործողությունների համախմբման ու համադրման խնդիր: Միջազգային տարբեր կազմակերպություններն ու կառույցները, հիմնադրամները ՀՀ տարածքներում գործունեություն են ծավալում ելնելով սեփական ծրագրային խնդիրներից, նպատակներից, ունենալով արդեն փորձարկված մեթոդաբանություն: Ընդ որում, դրանք գործում են կամ ՀՀ իշխանությունների հետ պայմանագրերի կամ Միջազգային պայմանագրերի շրջանակում:

Հետևաբար, ***կետ 18-ի*** *ձևակերպումը «...համակարգում է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող կամ ֆինանսավորվող՝ զբոսաշրջությանն առնչվող աջակցության ծրագրերը կամ ծրագրերի այն մասերը, որոնք պարունակում են զբոսաշրջության բաղադրիչ, ինչպես նաև վերահսկում է դրանց կատարման ընթացքը»* մեկնաբանությունների ու լրացուցիչ փաստարկումների կարիք ունի, քանի որ անիրատեսական է թվում: Իրավական իրագործման տեսանկյունից անհասկանալի է թվում նաև *«կատարման ընթացքի վերահսկում»* ձևակերպումը:

[23] ՀՀ Կառավարության 2019թ. ծրագիր, էջ 33:

Ասվածի վկայությունը ստացանք նաև Տավուշում զբոսաշրջության զարգացման աշխատանքային խմբի քննարկումների ընթացքում[24], երբ ըստ էության նույն նպատակադրումներով մարզում գործունեություն ծավալող երկու միջազգային կազմակերպությունների մոտեցումները սկզբունքորեն տարբերվում էին միմյանցից և այդ կազմակերպությունները բավարար չափով տեղեկացված չէին միմյանց գործունեության մասին:

Նույնը վերաբերում է նաև ընդունված փոփոխությունների հաջորդ՝ ***22 կետին*** *«...իրականացնում և համակարգում է զբոսաշրջության ոլորտի զարգացման աշխատանքները»:*

Իրականացնելը և համակարգելը տարբեր մակարդակի ու տարբեր կազմակերպում պահանջող միջոցառումներ են: ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի զարգացման աշխատանքներ իրականացնում են հազարավոր կազմակերպություններ ու անհատներ: Հետևաբար՝ Կոմիտեի գործառույթը լավագույն դեպքում կարող է լինել համակարգումը, այն էլ վերապահումներով:

Ամփոփելով օրենքի փոփոխությունները, արձանագրենք, որ

Ա. որոշ ձևակերպումներ հակասական են, բավարար չափով չհիմնավորված ու չփաստարկված:

Բ. Դրանցում հաշվի չեն առնված ՀՀ-ում համայնքահեն ու մարդակենտրոն զբոսաշրջության զարգացման ներուժն ու հնարավորությունները:

Գ. «Բացակայում» են համայնքները, որպես զբոսաշրջության զարգացման հիմնական դերակատարներ, լավագույն դեպքում դրանք ներկայացված են որպես քաղաքականության սուբյեկտ, այլ ոչ թե սուբյեկտ:

Դ. Փոփոխությունների որոշ կետեր ու դրույթներ հակասության մեջ են «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի» հետ:

Դրանցում արտացոլված չեն վերջին մեկ տարվա փոփոխություններն ու զարգացումները:

Հետևաբար, Զբոսաշրջության Կոմիտեն պետք է նախաձեռնի փոփոխությունների ևս մեկ շղթա՝ սեփական իսկապես արդյունավետ գործունեությունն ապահովելու համար:

Կոմիտեի գործառույթները ներկայացնող կարևոր կետերից մեկը, որն առանձին անդրադարձ է պահանջում, ձևակերպված է հետևյալ կերպ. ***«վարում է զբոսաշրջության***

[24] http://tavush.mtad.am/news/item/2019/04/09/seminar/

ոլորտի վարչական վիճակագրությունը (ռեգիստրը)»[25]**,** իսկ Կառավարության 2017-2022թ. ծրագիրը նախատեսում է, որ **մինչև 2019թ. ավարտը** ռեգիստրը պետք ներդրվի[26]:

Հետազոտված համայնքների աշխատակազմերը, ինչպես նաև մարզպետարանների համապատասխան բաժինների ղեկավարները, հարցազրույցների ընթացքում նշել են, որ 2019թ. ապրիլի դրությամբ դեռևս չեն ստացել տեղեկատվություն, ուղեցույցներ, ցուցումներ ու հրահանգներ զբոսաշրջային ռեգիստրի վարման կարգի, ընթացակարգերի մասին:

4.1.3 Օրենքները, տեղական ինքնակառավարումը և կիրարկման հնարավորությունները

Համայնքահեն զբոսաշրջության զարգացման ու զբոսաշրջային բաղադրիչի՝ համայնքային զարգացման ծրագրերում ներառման տեսանկյունից կարևոր է նաև տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունների ու պատասխանատվության խնդիրների դիտարկումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ***52 հոդվածը*** արդեն նախատեսում է լիազորություններ զբոսաշրջության բնագավառում.

«1. Համայնքի ղեկավարը զբոսաշրջության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) ***գույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.***

---

[25]Ուսումնասիրության ընթացքում ռեգիստրի վարման գործընթացը հետաձգելու կամ առկախելու մասին տեղեկատվության մենք չենք հանդիպել: Ազգային վիճակագրական ծառայության «Վիճակագրական հաշվետվությունների ձևեր» բաժնում «զբոսաշրջային ռեգիստրի» վերաբերյալ որևէ փաստաթուղթ դեռևս չկա: *Տես* ՝ https://www.armstat.am/am/?nid=547: Նման տեղեկատվություն չհանդիպեցինք նաև Զբոսաշրջության կոմիտեի պաշտոնական կայքում: Տես՝ https://armenia.travel/en:

[26]2017թ. շրջանառության մեջ դրված, սակայն չընդունված «Զբոսաշրջության մասին» օրենքը արդեն ավելի առարկայական անդրադարձել է ռեգիստրի վարման սկզբունքներին և պայմաններին: Մասնավորապես, խնդրին անդրադառնում է Հոդված 7-ը.

1. Հայաստանի Հանրապետությունում վարվում է զբոսաշրջության ոլորտի վարչական ռեգիստր՝ լիազոր մարմնի կողմից, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով:

2. Վարչական ռեգիստրը ներառում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած բովանդակությամբ տվյալների բազա Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ գործունեություն իրականացնող զբոսաշրջային գործունեության սուբյեկտների, հյուրանոցային տնտեսության օբյեկտների, սույն օրենքին համապատասխան որակավորված զբոսավարների, ուղեկցորդների, հանրային սննդի օբյեկտների, զբոսաշրջային ավտոբուսների և սույն օրենքին համապատասխան հավատարմագրված զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների վերաբերյալ:

3. Զբոսաշրջության ոլորտի վարչական ռեգիստրը վարվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակված և տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից պարտադիր սկզբունքով ներկայացվող տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա:
Տնտեսավարող սուբյեկտների տեղեկատվության և հաշվետվությունների ձևերը և ներկայացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

2) ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին տեղեկատվություն է տրամադրում համայնքի զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ.

3) ***զբոսաշրջության վարչական ռեգիստրի վարման նպատակով համապատասխան տեղեկատվություն է տրամադրում ռեգիստրը վարող պետական լիազոր մարմնին.***

4) համայնքում սահմանում և տրամադրում է հատուկ կայանման և կանգառի վայրեր՝ զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար.

5) զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման և զբոսաշրջության կայուն զարգացման նպատակով համագործակցում է պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության հետ.

6) իր լիազորությունների շրջանակում ընդունված որոշումներով խթանում է զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը».[27]

Հետազոտությունը թույլ տվեց խնդիրներ արձանագրել ոչ միայն օրենքների, որոշումներ ու պետական քաղաքականության այլ փաստաթղթերի, այլ դրանց կատարման ու կատարող միավորների՝ ինստիտուցիոնալ հնարավորությունների հետ կապված:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի այս փոփոխությամբ համայնքները ստանձնում են կոնկրետ պարտականություններ, սակայն փորձագիտական հարցումները ցույց տվեցին, որ ոչ բոլոր համայնքներն են դրանք պատրաստ:

Նախ. դեռևս բացակայում են կոնկրետ փաստաթղթերը, որոնք վերաբերում են հաշվառումներին ու հաշվետվություններին, չկան ուղեցույցներ, ձեռնարկներ՝ հաշվետվություններ կազմելու ներկայացնելու հետ կապված, գոնե ուսումնասիրված համայնքներում դեռևս չեն ացկացվել համապատասխան մասնագետների վերապատրաստումներ:

Հաջորդ մտահոգություններից մեկն այն է, որ համայնքներում պետք է լինի զբոսաշրջության մասնագետ, որը և կապահովի բոլոր լիազորությունների իրականացումը: Պարզ է, որ հատկապես գյուղական համայնքներում բարդ է լինելու համապատասխան որակավորում ունեցող մասնագետ գտնելը կամ աշխատանքի հրավիրելը, քանի որ բոլորը չէ, որ կցանկանան ցածր աշխատավարձի պայմաններում անցնել համայնքային ծառայության, երբ փոխարենը կարող են աշխատել որպես զբոսավար ու այլ զբոսաշրջային ծառայություններ մատուցել:

[27]Հայաստանի Հանրապետության օրենքը «տեղական ինքկառավարման մասին»: Հոդվածը գործողության մեջ է մտնելու 27.09.2019թ.-ից: http://www.irtek.am/views/act.aspx?tid=154489: Տես նաև՝

Ստացվում է, որ համայնքների ղեկավարների վրա դրված են պարտավորություններ, սակայն հստակեցված չեն դրանց կատարման մեխանիզմները, չկան մեթոդական ուղեցույցներ, ապահովված չէ անձնակազմի վերապատրաստումը:

«ՏԻՄ լիազորությունները ավելացվեցին, բայց միայն պարտականություններն ավելացնելով չի լինի: Աշխատակազմը պետք է համապատասխանի, մասնագետներ ունենա,առաջարկություններ ներկայացնի, աշխատանքներն իմանա, զբոսաշրջության հետ կապված, ամփոփի: Եթե մասնագետ չկա, զբաղվելը ձևական է դառնում կամ ամեն մեկն անելու է իր մասով ու արդյունք չի տալու: Դրա համար մասնագետ է պետք, իսկ մանագետն էլ աշխատավարձ է ուզում, բարձր աշխատավարձ: Հիմա կրտսեր մասնագետի վրա լրացուցիչ պարտականություն ենք դնում, ասում է դիմումս կգրեմ, կգնամ: Անհատական խորացված հարցազրույց, Վայոց ձորի մարզ»:

4.2 Համայնքահեն զբոսաշրջություն թե ձևակերպումներ համայնքային փաստաթղթերում. իրականություն և հիմնախնդիրներ

Պետական քաղաքականության փաստաթղթերի դրույթներն ու պահանջները այս կամ այն կերպ արտահայտված են տեղական ինքնակառավարման ոլորտի փաստաթղթերում: Որոշ դեպքերում տարբեր համայնքների փաստաթղթերում հանդիպում են նաև գրեթե նույնական ձևակերպումներ, քանի որ կան մշակված ստանդարտներ, գնահատման մեթոդաբանություն, համայնքային կարիքների բացահայտման սկզբունքներ:

Նշեցինք, որ հետազոտված համայնքներից երկուսը Վայոց ձորի, իսկ երկուսը՝ Տավուշի մարզում են: Ընտրանքը կառուցված է այնպես, որ երկու դեպքում համայնքի կենտրոնը քաղաք է՝ Վայք և Դիլիջան, երկու դեպքում գյուղ՝ Կողբ և Արենի:

Համայնքներում իրավիճակը բացահայտելու և վերլուծելու հիմնական գործողությունները եղել են երկուսը. փաստաթղթերի ուսումնասիրություն և հարցազրույցներ տեղերում:

Բոլոր համայնքների համար ուսումնասիրվել են «Համայնքի 2017-2022թթ. զարգացման ծրագիրը», «Տարեկան աշխատանքային պլանը»[28], «Տեղական տնտեսական զարգացման պլանը» (եթե համայնքն ունեցել է):

Չորս համայնքի հիմնական փաստաթղթերում էլ զբոսաշրջության զարգացման տարբեր դրույթները ներառված են: Այս բաժնում, ինչպես նախորդում, կներկայացնենք փաստաթղթերը, այնուհետ՝ փորձագիտական գնահատականներն ու կարծիքները, առավել ամբողջական պատկեր ունենալու համար:

Դիլիջան համայնքի «2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրում», հաստատված 2016թ., զբոսաշրջությանը անդրադարձ կատարվում է մի քանի անգամ:

[28] Որոշ դեպքերում 2018, իսկ որոշ դեպքերում՝ 2019թ. համար:

Նախ՝ ծրագրի նկարագրական մասում, Դիլիջան քաղաքի ու խոշորացված համայնքների հնարավորությունների գնահատման բաժնում, քաղաքի զբոսաշրջային հնարավարությունները քանիցս շեշտադրվում են.

«Քաղաքի չքնաղ բնապատկերը լրացուցիչ դրական ներգործություն է ունենում հիվանդների և հանգստացողների վրա: Քաղաքի ընդհանուր բնապատկերին առանձին հմայք է հաղորդում Աղստև գետը իր վտակներով: Անտառի տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ».[29]

«Անտառը» որպես ռեսուրս փաստաթղթերում բազմիցս ներկայացվում է: Զբոսաշրջության զարգացմանը, սակայն, ոլորտի մասնագետների կարծիքով, այսօր արդեն էապես խոչընդոտում են անտառահատումները, քայլարշավների ժամանակ անտառի այս կամ այն հատվածում հանդիպող փայտ տեղափոխող մեքենաները, «դրուժբայի» աղմուկը:

«Զմռանը Ֆրանսիայից հյուրեր ունեի, ամուսիններ էին: Երեք կիլոմետր ոտքով քայլեցինք: Լավ եղանակ էր: Ամբողջ ընթացքում այս մարդիկ մի թռչունի ձայն չկարողացան լսել, որովհետև լսվում էր միայն «դրուժբաների» (էլեկտրական սղոցների) ձայնը: Հիմա ես էլ չգիտեմ, էդ մարդիկ իմ մոտ կգան, թե չէ: Կամ գան, ինչ անեն: Նույնը կեղտը: Սարսափելի է: Աղբամանները հարևանությամբ են, բայց մարդիկ մեքենաներով իրենց տան շաբաթների աղբը տանում, անտառում են թափում» (աշխատանքային քննարկման նյութեր, Տավուշի մարզ):

Նույն մտահոգությունները ներկայացվել են Դիլիջանում: Այստեղ, անտառի հանդեպ վերաբերմունքի փոփոխության բարդության մասին խոսելիս, նույնիսկ հիշեցին ասացվածքը Հաղարծին գյուղի մասին. ***«հաղարծինցին ծնվել է «Դրուժբա»-ն ձեռքին»:***

Զարգացման ծրագիրը, ավելի կոնկրետ ու առարկայական շեշտադրումներով, դիտարկում է նաև համայնքում զբոսաշրջության զարգացման խնդիրները: Ծրագիրն ունի առանձին «Զբոսաշրջություն» բաժինը:

Կարիքների բացահայտման արդյունքում ներկայացված են այն հիմնահարցերը, որ խոչընդոտում են զբոսաշրջության զարգացմանը համայնքում.

- *Տեսարժան վայրերի սահմանափակ քանակ:*
- *Հյուրընկալության ոլորտի մասին հավաստի և ամբողջական տեղեկատվության պակաս:*
- *Կողմնորոշումը ամառային հանգստի վրա:*
- *Ժամանցի և զվարճությունների վայրերի բացակայություն:*

[29] «Դիլիջան համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր», էջ 3:

- *Մշակութային միջոցառումների կազմակերպման և տարածման մասին տեղեկատվության պակաս:*
- *Քաղաքում տեղեկատվական կետերի բացակայություն:*
- *Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայություն:*

Ինչպես տեսնում ենք, որոշ դեպքերում փորձագիտական կարծիքներն ու համայնքային ծրագրերի դրույթները միմյանց չեն համապատասխանում:

Ձևակերպված են նաև զբոսաշրջության զարգացման հիմնական նպատակները. *«Պահպանել զբոսաշրջային գրավչությունները, վերականգնել հյուրասիրության ավանդույթները, բարելավել հյուրընկալման ծառայությունների որակը, թաղամասերը, զբոսաշրջային կառույցները և ենթակառուցվածքները, խրախուսել մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտ: Դիլիջանը դարձնել հանրապետական երիտասարդական միջոցառումների կենտրոն»:*

Խնդիրների շրջանակը ևս բավականին ընդարձակ է.

1. *Հիմնել համայնքային զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Դիլիջանի և հարակից տարածքների համար (արդեն հիմնված է և գործում է* https://www.idea.am/hy/news/2018/08/20/first-regional-tourist-information-center-opens-in-dilijan/ *):*
2. *Ստեղծել այցելուների կենտրոն Դիլիջանի ազգային պարկում:*
3. *Զարգացնել վեբ և մոբայլ հավելվածները՝ զբոսաշրջության ոլորտի խթանման համար:*
4. *Վերանորոգել 11 թեմատիկ երթուղիներ:*
5. *Վերազինել Ազգային պարկի երթուղիները ցուցանակներով:*
6. *Ստեղծել Արհեստների կենտրոն:*
7. *Կազմակերպել հմտությունների զարգացման դասընթացներ արհեստների կենտրոնում:*
8. *Ստեղծել Ագրո շուկա:*[30]
9. *Մշակել ուղեցույցներ*
10. *Իրականացնել կարողությունների զարգացման դասընթացներ:*
11. *Քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցության ընդլայնում:*
12. *Ստեղծել և տարածել տուրիզմին և բիզնեսին վերաբերվող ամբողջական տեղեկատվական բազա:*
13. *Պատրաստել գովազդային հոլովակներ, տպագրել բուկլետներ և արտաքին գովազդային պաստառներ:*

[30] Ստեղծված է Idea հիմնադրամի, համայնքապետարանի ու միջազգային կազմակերպությունների համագործակցության արդյունքում, անհատույց (երեք տարի ժամկետով) հանձնվելու է քաղաքային իշխանություններին:

14. *Կառուցել բազմաֆունկցիոնալ կանգառներ տեղացի արհեստավորների և փոքր ձեռնարկատերերի համար, տրամադրել տարածք, որտեղ նրանք կարող են ցուցադրել իրենց աշխատանքները և վաճառել իրենց արտադրանքը:*
15. *Բարեկարգել երթուղիները և տեղադրել զբոսաշրջիկներին կողմնորոշող ցուցանակներ:*
16. *ՈՒնենալ վերապատրաստված ուղեկցողներ և գիդեր, զբոսաշրջիկներին դիմավորող անձնակազմ, թարգմանիչներ և գրասենյակային այլ ծառայություններ:*
17. *Փողոցներում կողմնորոշող ցուցանակների տեղադրում առավել կարևորություն ներկայացնող տեսարժան վայրերի նկարներով, մատնանշելով ճանապարհային ուղղությունները:*
18. *Զբոսաշրջության միջազգային օրվա ամենամյա նշում և միջոցառումների կազմակերպում:*

Զբոսաշրջության զարգացման հետ կապված այս խնդիրը ներառում են տարբեր ոլորտներ՝ ենթակառուցվածքներից մինչև կոնկրետ միջոցառումներ: Բնական է, որ զարգացման ծրագրում առանձին կետով ներկայացված են նաև կոնկրետ միջոցառումներն ու ֆինանսավորման աղբյուրները. ըստ այդմ, համայնքի մասնակցությունը չնչին է և հիմնական ֆինանսավորումը տրվելու է միջազգային կազմակերպությունների կողմից:[31]

«Դիլիջան համայնքի տարեկան աշխատանքային պլան»-ը, որը համայնքի գործունեության կարևոր փաստաթուղթ է, պարունակում է զբոսաշրջության վերաբերյալ կոնկրետ դրույթներ:

Համայնքի տեսլականն այս փաստաթղթում ձևակերպված է շատ կոնկրետ և որոշակի. «**Դիլիջանը միջազգային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման կենտրոն է, բարձր կենսամակարդակ և զբաղվածություն ունեցող բնակչությամբ: Համայնքը տարածաշրջանային ֆինանսական, կրթական կենտրոն է, որտեղ մատուցվում են հանրային որակյալ ծառայություններ»**: [32]

Պլանի համայնքային ոլորտային նպատակները բաժնում զբոսաշրջությանն անդրադարձ նույնպես արվում է: Թիվ 16 նպատակում նշվում է. «Խթանել համայնքում զբոսաշրջության զարգացումը», իսկ վերջնական արդյունքի մեջ դրված են կոնկրետ թվային ցուցանիշներ, ըստ որոնց «զբոսաշրջիկների բավարարվածությունը մատուցված համայնքային ծառայություններից պետք է հասնի 100 տոկոսի և պետք է ավելանա նաև համայնք այցելող զբոսաշրջիկների թիվը՝ 20 տոկոսով»:[33] «Ծրագրերի ցանկ և

[31] 2019թ. արդեն որոշ գործողություններ իրականացված են: Գործում է զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնը, տեղադրված են տեղեկատվական վահանակները, կենտրոնում առկա են մեծ թվով ուղեցույցներ ու տեղեկատվական նյութեր:

[32] Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլան, Դիլիջան, 2017, էջ 4:

[33] Նույն տեղում, էջ 9:

տրամաբանական հիմքեր» բաժնում դարձյալ զբոսաշրջությունը ներառված է. մասնավորապես նախատեսվում է բոլոր համայնքներում համայնքային տեղեկատվական կենտրոնների հիմնում և համայնքում զբոսաշրջային ծրագրերի իրականացում:[34]

ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների ներկայացված է առանձին աղյուսակով, որում բավականին մանրամասն ներկայցված ու վերլուծված են զբոսաշրջային ոլորտի ծրագրերն ու ուղղությունները:

Քննարկենք դրանք առանձին: Ոլորտային նպատակը համայնքում զբոսաշրջության զարգացման խթանումն է, իսկ վերջնարդյունքն արդեն ներկայացված՝ զբոսաշրջիկների բավարարվածության աստիճանի և թվաքանակի աճն է՝ կոնկրետ թիրախային ցուցանիշներով:

Միջոցառումների և գործողությունների նկարագրությունից բացի, կարևոր է ձևակերպումը, ըստ որի խնդիրների շարքում կարևոր է «Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն»:[35]

Կողբ խոշորացված համայնքի փաստաթղթերում նույնպես զբոսաշրջության զարգացումը կարևոր տեղ ունի: Համայնքի զարգացման ծրագրում, մասնավորապես, ներկայացված է հետևյալ տեսլականը. ***«Կողբ համայնքը հայտնի արտ և ագրո-էկո զբոսաշրջային կենտրոն է՝ իր ենթակառուցվածքներով, բարեկարգ, մաքուր և լուսավոր փողոցներով, ունի մշակված, բերրի և ոռոգելի հողատարածքներ, անասնապահական ֆերմաներ, որակյալ կրթություն և առողջություն ապահովող հաստատություններ, զբաղված բնակչություն, որն աշխատանքից հետո իր ազատ ժամանակն անց է կացնում համայնքի նորակառույց զբոսայգում և այլ ժամանցի վայրերում»:***

Զբոսաշրջության հետ է կապվում նաև համայնքի ռազմավարությունը. ***«Կողբ համայնքի զարգացման հիմքում դնել գյուղի զբոսաշրջային ներուժի և այլ մրցակցային առավելությունների բացահայտումը, հարևան համայնքների հետ արդեն իսկ ձևավորված արդյունավետ տնտեսական համագործակցությունը, վերջինիս զարգացումը և ծառայեցումը համայնքի կարիքներին»:***[36]

Նախատեսված միջոցառումներից շատերը, ինչպես Դիլիջանի դեպքում, նույնպես ուղղակի կամ անուղղակի կապ ունեն զբոսաշրջության հետ, սպասարկում են վերջինս կամ նպաստում են զարգացմանը: Կողբ համայնքի դեպքում կարևոր է հատկապես «Թումո» կենտրոնի կառուցումը, որըմ բացի համայնքի և հարևան համայնքների երեխաների

[34] Նույն տեղում, էջ 11:
[35] Նույն տեղում, էջ 38-39:
[36]«Կողբ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր», էջ 17:

կրթական կարիքները հոգալուց, նպաստելու է նաև զբոսաշրջության զարգացմանը, հատկապես եթե նակտի ունենանք «Թումո» կենտրոնների հանդեպ լուրջ հետաքրքրությունը նաև Հայաստանի սահմաններից դուրս:

Ծրագիրը բացահայտում է զբոսաշրջության զարգացման հինախնդիրները *հիմնահարց, պատճառ, հետևանք, այլընտրանք* սխեմայի միջոցով:

Տուրիզմի զարգացման ենթակառուցվածքների և տուրիստական արդյունքի արտադրման պայմանների բացակայություն	Ֆինանսական միջոցների բացակայություն	Բնակչության եկամուտների նվազում, Համայնքի բյուջեի նվազում	Արհեստագործության զարգացման և հուշանվերների պատրաստման սարքավորումների ձեռքբերում, Հանգստի գոտու կառուցում, Մշկավանքի ճանապարհի վերանորոգում (1700մ), հյուրատների կառուցման համար ցածր տոկոսով վարկերի տրամադրում

ՏԱՊ-ում որպես զբոսաշրջության զարգացման միջոցառում նախատեսված է համայնքին տարածքում գտնվող «Փյունիկ» ճամբարի վերականգնումը և հանգստի ու զբոսաշրջային համալիրի ստեղծումը:

Տավուշի մարզի խոշորացված երկու համայնքի փաստաթղթերի դիտարկմամբ արձանագրվում է, որ զբոսաշրջությունը որպես համայնքային զարգացման կարևոր ողողություն համարվում է առաջնային և ըստ տեսլականի ու ռազմավարության, դիտվում է որպես համայնքի ընդհանուր՝ սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացման կարևոր նախապայման:

Չնայած կոնկրետ շեշտադրումների բացակայությանը, որպես զբոսաշրջության զարգացման վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող գործոն են դիտարկվում նաև համայնքներում իրականացվող տարբեր աշխատանքները՝ ենթակառուցվածքներ ու կոմունիկացիաներ, գյուղատնտեսության զարգացում և այլն:

Վայոց ձորի մարզի դիտարկված երկու համայնքում ունենք հետևյալ պատկերը:

Արենի համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը սկսվում է համայնքի ղեկավարի ողջույնի խոսքով, որը շատ կոնկրետ ու որոշակի թիրախավորում է զբոսաշրջությունը. «Արենին հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, գեղատեսիլ բնությամբ, խաղողագործության և գինեգործության հարուստ ավանդույթներով, հյուրընկալ և աշխատասեր ժողովրդով համայնք է: Համայնք ունի զարգացման ահռելի, դեռևս չօգտագործված ներուժ: Զարգացման արդյունավետ պլանավորման դեպքում համայնքն ունի հանրապետությունում և տարածաշրջանում գինեգործության և զբոսաշրջության առաջատար կենտրոն դառնալու հեռանկար: Համայնքում և դրա շրջակայքում առկա զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջային գրավչության օբյեկտները, գինեգործության հազարամյա ավանդույթները և համայնքի բնակիչների ավանդական

հյուրընկալությունն ու հյուրասիրությունն անփոխարինելի գրավականն են համայնքի հետագա զարգացման և բարգավաճման: Սույն ծրագիրը մշակվել է վերոնշյալ ռեսուրսների հիման վրա՝ համայնքի զարգացման ճանապարհը հստակեցնելու նպատակով... Ծրագրերի իրականացման համար լուրջ տեղ են զբաղեցնելու ինչպես համայնքի բնակչությունը, այնպես էլ գործարար միջավայրը»:[37]

Արենիի զարգացման ծրագրում անդրադարձերը զբոսաշրջությանը, համայնքի զբոսաշրջային ներուժին, բավականին շատ են: «Համայնքում իրականացվող ծրագրեր» բաժնում թիրախավորվում է նաև անհատական ձեռնարկատիրությունը. «Համայնքի տարածքում կան նաև փոքր անհատ ներդրողներ, որոնք ցանկանում են զարգացնել տնային տուրիզմը և ավանդական գինեգործությունը: Ներկայումս կան մի քանի անհատներ, որոնք զբաղվում են տնային տուրիզմով, բայց ոլորտը հետագա զարգացման մեծ հեռանկարներ և ներուժ ունի: Համայնքի ղեկավարության կողմից կարվի ամեն ինչ նշված փոքր ձեռնարկատերերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու համար: Ծրագիրը հնարավորություն կտա զարգացնելու թե զբոսաշրջությունը թե գյուղատնտեսությունը: Անհատ ֆերմերները և այգեգործները հնարավորություն կստանան տեղում իրացնել իրենց արտադրանքը»:[38]

Ծրագիրը օբյեկտիվ գնահատում է նաև զբոսաշրջության զարգացման խոչընդոտները, առանձնացնելով մարդկային գործոնը՝ այն է բնակչության պասիվ մասնակցությունը և ենթակառոցվածքների գործոնը՝ անբարեկարգ ճանապարհները:[39]

Ի տարբերություն վերը դիտարկված երկու համայնքի ծրագրերի, զբոսաշրջությունը շատ որոշակի թիրախավորված է նաև «համայնքի թույլ կողմերը» բաժնում, ինչը խոսում է եթե ոչ մանրամասն հետազոտության, ապա գոնե բավականին խորքային դիտարկումների մասին:

Որպես համայնքի թույլ կողմեր, այլ կետերից բացի, առանձնացվում են «տնական արտադրության գինու փաթեթավորման ցածր որակը, տնական գինու վաճառքի վատ պայմանները, այցելուների և զբոսաշրջիկների ժամանցի համար գրավիչ միջոցառումների, ժամանցի վայրերի բացակայությունը, զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնի բացակայությունը, որակյալ ուղեկցորդների պակասը, սպասարկման ոլորտում օտար լեզվի իմացությամբ որակյալ կադրերի պակասը»:[40]

Փաստացի, զարգացման ծրագրից բխում են նաև «2019թ. տարեկան աշխատանքային պլան»-ում նախատեսված ոլորտային միջոցառումները, որոնք նախատեսում են զբոսաշրջության աճ նախորդ տարվա 12%-ի դիմաց 20%-ով:

---

[37] «Արենի համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր», էջ 2:
[38] Նույն տեղում, էջ 5:
[39] Նույն տեղում, էջ 7:
[40] «Արենի համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր», էջ 8:

Զբոսաշրջության զարգացման ծրագրեր իրականացվելու են 5 բնակավայրերում:[41] Ստորև աղյուսակը մանրամասն ներկայացնում է համայնքի մեջ մտնող բնակավայրերում զբոսաշրջային ծրագրերի նպատակն ու այլ ցուցանիշներ.

Ծրագիր 1. Զբոսաշրջության զարգացման ծրագրերի իրականացում բնակավայրերում[42]					
Ծրագրի նպատակ. Նպաստել համայնքում զբոսաշրջության ոլորտում ներդրումների ներգրավմանը	Զբոսաշրջության ոլորտում ներդրումների աճը նախորդ տարվա համեմատ –20%	Համ. Ղեկ. Հաշվ., Մոնիթ., և գնահատ.	Զբոսաշրջության ծրագրերի համակարգող	1 տ.	Մասնավոր հատվածների կողմից ֆինանսական ներդրումների ուշացումներ
Միջոցառումներ • Կազմակերպել Գինու փառատոն, Գաթայի փառատոն և Ռինդի «Համայնքի օր» միջոցառումները • Հյուրանոցային համալիրի կառուցում Արենի բնակավայրում • Գինու համտեսի սրահի կառուցում Աղավնաձոր բնակավայրում	**Ելքի ցուցանիշներ** 1. Փառատոնների մասնակիցների թիվը-23000 2. Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը նախորդ տարվա համեմատ - 12 % 3. Հյուրանոցային համալիրում նոր ստեղծվող աշխատատեղերի թիվը –35 4. Գինու համտեսի սրահ այցելող զբոսաշրջիկների թիվը–10000 **Մուտքի ցուցանիշներ** 1. Փառատոնների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը–18 2. Մասնավոր ներդրողներ- «Թուֆենկյան հոսփիթալիթի» ՍՊԸ 3. Միջոցառումների իրականացման2մլրդ ընդհանուր ծախսերը դրամ, որից համայնքի բյուջե 0.0հազ. դրամ, մասնավոր հատված 2մլրդ. դրամ,	Արենիի համայնքապետարան			

Զբոսաշրջության, հատկապես համայնքահեն զբոսաշրջության շեշտադրումը հստակ է նաև Արենի համայնքի ուսումնասիրված երրորդ փաստաթղթում՝ «Տեղական տնտեսական զարգացման պլան»-ում:[43] Ներածական մասում, մասնավորապես նշվում է, որ «2018-2021թվականների ընթացքում դառնալու է տարածաշրջանի բարեկարգ, բարեկեցիկ, մշտապես բնակվելու համար լավագույն համայնքը, որը Հայաստանի այցեքարտն է գինու տուրիզմի ոլորտում և դեպի համայնք կձգի ոչ միայն զբոսաշրջիկների,

[41] Վայոց ձորի մարզի Արենի համայնքի 2019թ. տարեկան աշխատանքային պլան, Արենի, 2018, էջ 5-7:
[42] Նույն տեղում, էջ 19:
[43] Տեղական տնտեսական զարգացման պլան: Արենի համայնք, 2018:

այլև ներդրողների, աշխատել և մշտապես բնակվել ցանկացողների: Արենի համայնքը կլինի Վայոց Ձորի մարզի այցեքարտի լավագույն ատրիբուտը»:[44]

ՏՏԶ-ն, կրկնելով նախորդ ծրագրերի դրույթները, զբոսաշրջությունը ներկայացնում է որպես խոշորացված համայնքի զարգացման կարևոր ուղղություն, մանրամասն վերլուծելով նաև զբոսաշրջության զարգացման միտումները. «Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը զբոսաշրջությունն է: Բազմազան և գեղեցիկ բնությունը (բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 1000-2100 մետր բարձրության վրա), հարուստ պատմամշակութային ժառանգությունը, բնական, բուժիչ հատկություններ ունեցող ջրերը /Ազարակաձոր, Արենի, Արփի բնակավայրեր/ միշտ էլ ձգել են զբոսաշրջիկների, իսկ 2004թվականից մշտապես կազմակերպվող փառատոները ավելացնում են օտարերկրյա զբոսաշրջիկների հոսքը համայնքի բնակավայրեր, մեծ պոտենցիալ կա զուգահեռ զարգացնել նաև արկածային, էկո և ագրո տուրիզմի ուղղությունները: 2017թ.-ին Արենի համայնք է այցելել մոտ 60,000 զբոսաշրջիկ, որոնց ընդամենը 6200-ը գիշերակացով: Համայնքում գործում են 2 հյուրանոց, 18 հյուրատներ, 4 ռեստորան և 30 արագ սննդի կետ: Ընդհանուր առմամբ զբոսաշրջային ոլորտում Արենի համայնքում զբաղվածների թիվը կազմում է 72մարդ, որոնցից 60%-ը կանայք: Զբոսաշրջության ծավալը էական աճել է 2015 թ.-ից՝ Խաչիկ բնակավայրում գաթայի փառատոն կազմակերպելուց հետո»:[45]

Ինչպես այլ փաստաթղթերը, այս մեկը ևս անդրադառնում է զբոսաշրջության զարգացման խոչընդոտներին: Որպես այդպիսիք դիտվում են «սանիտարական մաքրման ոչ բավարար մակարդակը, ճանապարհային ուղղորդիչ նշանների բացակայությունը, հիմնական զբոսաշրջային վայրեր տանող ճանապարհների վատ որակը, համայնքի զբոսաշրջային քարտեզների բացակայությունը»:[46]

Հարցազրույցների ընթացքում հնաավոր եղավ պարզել նաև այլ խոչընդոտներ կամ խնդիրներ, որ վերաբերում են առաջին հերթին մասնակցայնությանը՝ գործողությունների տարբեր փուլերում.

«Մեթոդական, քարտեզագրման հարցերը ավելի շատ թողնված են համայնքի վրա: Մենք տուրիզմի զարգացման ռազմավարություն ենք ուզում ներկայացնել, համագործակցում ենք, բայց մասնագետներ են պետք: Համայնքներում կադրային խնդիրներ կան, մենք մասնագետներ չենք ու փորձում ենք հարմարվել: Համագործակցությունը շատ կարևոր է, բայց մասնագետների ու մեթոդաբանության խնդիր ունենք ու շատ լավ կլիներ, որ էդ մեթոդաբանությունը մշակեին ու տային, վերապատրաստումներ անցնեինք: Բոլորս փորձում ենք հարմարվել մեր ոլորտներին: Ցանկացած պարագայում համայնքները պետք է բյուջեով միջոցներ նախատեսեն սեմինարների,

[44] Նույն տեղում, էջ 2:
[45] Նույն տեղում, էջ 5: 2019թ. Արենի համայնքում արդեն գործող հյուրատների թիվը մոտենում է 25-ի:
[46] Նույն տեղում, էջ 9:

վերապատրաստումների համար: Դա կարա լուծում լինի: (Ն. Գրիգորյան, փորձագիտական հարցում, Վայոց ձորի մարզ)»:

Փորձագիտական մակարդակում կարևոր է համարվում մասնակցայնության ապահովումը, սակայն, միաժամանակ արձանագրվում է, որ այն դեռևս բավարար չէ: ***«քաղաքացիական ակտիվ խմբերի մասով նույնիսկ Արենին էդքան ակտիվ չէ, ինչքան թվում է: Մասնակցային առումով երիտասարդներն էլ ակտիվ չեն: Ես նախկինում ակտիվ խմբի ներկայացուցիչ էի, աշխատում էինք «Քառնթերփարթ»-ի հետ: Ամիսը 2-3 անգամ, հանդիպումներ ունենում էինք, արդյունքում համայնքային թերթ տպագրեցինք, վեբ կայք ստեղծեցինք: Հիմա էն ժամանակի համեմատ պասիվացել է: Չգիտեմ ինչու: Ամենամեծ խնդիրը քաղաք գնացող – չեկող ուսանողության մեջ է» (Ն. Գրիգորյան, փորձագիտական հարցում, Վայոց ձորի մարզ):***

Բացի քաղաքացիական խմբերի, համայնքի բնակչության ակտիվությունից, զբոսաշրջային ներուժի ու հնարավորությունների գնահատման առումով, ըստ փորձագետների, դեռևս շարունակում է կարևոր մնալ ռեսուրսների ամբողջական քարտեզագրումը, ընդ որում, սա վերաբերում է նաև մարդկային ռեսուրսին:

«Առանձին համայնքները մենք ուսումնասիրում ենք, ով ինչ գտնում է, փորձում է հասկանալ: Բայ որ ասես գրած, պատրաստի ունենք, չէ: Չունենք, դեռ պիտի ունենանք: Մենք բանկ չունենք տվյալների: Վայոց ձորում երևի բոլոր տեղերում սաղմնային վիճակ է» (Զ. Հարությունյան, փորձագիտական հարցում, Վայոց ձորի մարզ):

Վայքում ևս ուսումնասիրվել է երեք հիմնական փաստաթուղթ:[47] Զարգացման ծրագիրը անդրադառնում է զբոսաշրջության զարգացմանը հետևյալ ձևակերպմամբ.

«Վայքի տնտեսության հեռանկարը ռազմավարական և բարելավվող ճյուղերն են, որտեղ կուտակված է տնտեսական զարգացման պոտենցիալը: Տուրիզմի և այգեգործության զարգացման շուրջ պետք է կառուցվի Վայքի տնտեսության զարգացման առանցքը»:[48]

Բավականին մանրամասն ներկայացվում են նաև զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները. «Վայքի աշխարհագրական դիրքը բարենպաստ պայմաններ է ստեղծում զբոսաշրջիկներին ժամանակավոր հյուրընկալելու, կացարաններով ապահովելու համար, քանի որ համայնքով է անցնում դեպի Արցախ և Իրանի հանրապետություն տանող միջպետական մայրուղին: Վայք քաղաքը հանդիսանում է շատ հարմար բնակավայր արագ սննդի կազմակերպման և գիշերակացի հնարավորություն կազմակերպելու համար: Քաղաքում զարգացած է ռեստորանային և հյուրանոցային բիզնեսը: Համայնքը նաև շատ հնարավորություններ ունի գյուղերում զարգացնելու էկոտուրիզմը»:[49]

---

[47]Վայք համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլան; Վայք համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիր; Վայք համայնքի տեղական տնտեսական զարգացման պլան:

[48] Վայք համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիր, էջ 9:

[49] Վայք համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիր, էջ 10:

Համայնքում զբոսաշրջության զարգացումը խոչընդոտող գործոնների շարքում, ի թիվս այլ գործոնների, նշվում է «... այս ամենով հանդերձ համայնքի զբոսաշրջային ներուժը բավարար լուսաբանված չէ տարբեր տեղեկատվական աղբյուրներում, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով»:[50]

Ծրագրի վերջին մասում, որտեղ ամփոփ ներկայացվում են տեսլականն ու նախատեսվող ծրագրերը, հերթական անգամ անդրադարձ է կատարվում զբոսաշրջությանը:

«Համայնքի զարգացման ռազմավարությունն է բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր: Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչները կունենան զբաղվածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում»:[51]

Համայնքի զարգացման ծրագրերից մեկն ամբողջությամբ վերաբերում է զբոսաշրջության զարգացմանը. «Վայք համայնքը հանդիսանում է հարուստ զբոսաշրջային ներուժ ունեցող համայնք, սակայն հանրապետության տուրիզմի շուկայում չափազանց համեստ տեղ է գրավում: Այստեղ հնարավոր է զարգացնել էկոտուրիզմը, ագրոտուրիզմը, այցելությունները պատմական հուշարձաններ, պատմական վայրեր: Վայք համայնքի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության վերը նշված ձևերի զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում են գտնվում թվով 7 ժամանակակից ռեստորանահյուրանոցային համալիրներ, 3-4 հյուրատներ: Այսպիսով, նախատեսվում է համայնքում վերը նշված միջոցներով առաջիկա 5 տարիներին 2017-2021թթ. ավելացնել հյուրատների քանակը, հասցնելով մինչև 20-ի: Ինչպես նաև զարգացնել ագրոտուրիզմը զբոսաշրջային զբոսաշրջային սեզոնին կազմակերպել այցեր ոչ միայն պատմամշակութային վայրեր, այլև մասնակցությունը բերքահավաքի, գինու և այլ գյուղատնտեսական արտադրանքների պատրաստման գործընթացներին: Կազմել տուրեր տուրիզմ նախընտրողների համար»:[52]

Չնայած զբոսաշրջության կարևորմանը, Տարեկան աշխատանքային պլանում զբոսաշրջային ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:[53]

Զբոսաշրջային ուղղության զարգացումը, որպես ռազմավարական նպատակ, ձևակերպված է նաև համայնքի «Տեղական տնտեսական զարգացման պլանում»: Այստեղ,

---

[50] Նույն տեղում, էջ 15:
[51] Նույն տեղում, էջ 21:
[52] Վայք համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիր, էջ 24:
[53] Վայք համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլան, էջ 6-7:

մասնավորապես նշվում է «... համայնքը գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն է, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և տարանցիկ զբոսաշրջության սպասարկման լայն հնարավորություններով: Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանել է հիմնական նպատակներ, այն է՝ համայնքում *ունենալ գրավիչ ներդրումային միջավայր, փոքր և միջին բիզնեսի զարգացում, մրցունակ գյուղմթերքների արտադրության աճ, համայնքում ապահովել կայուն զբոսաշրջություն»:*

ՏԱՊ-ի համեմատ, այստեղ արդեն նշված են նաև կոնկրետ ցուցանիշներ. «նախատեսվում է նաև մինչև 2021թ. համայնքում գիշերակացի համար կանգ առնող զբոսաշրջիկների թիվը հասցնել 15000-20000-ի: Նախատեսվում է Հերհերի ջրամբարի հարևանությամբ ստեղծել տուրիստական հանգրվան, իր բազմապրոֆիլ հնարավորություններով, տարեկան ապահովելով մինչև 1000-2000 գիշերակացերով»:[54]

ՏՏԶ-ում, ի տարբերություն համայնքի զարգացման փաստաթղթի, հստակ ուրվագծվում են համայնքում զբոսաշրջության զարգացման հիմնական կամ հնարավոր ուղղությունները. *«համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը համայնքով անցնող հանրապետության հյուսիսը-հարավին կապող միակ միջպետական մայրուղին է: Մայրուղու երկայնքով հոսում է Արփա գետը, որի ափամերձ տարածքներում գործում են առևտրի, հանգստի, սննդի օբյեկտներ, հյուրատներ ու հյուրանոցներ: Տարեկան համայնքով անցնող ուղևորահոսքը կազմել է 420-680 հազար մարդ /ԱՎԾ տվյալներով/, որը 2016թ. համեմատությամբ ավելացել է 150-200 հազ.-ով: 2017թ. համայնքում 2-ից 5 օրով գիշերակաց են ապահովել 4568 այցելու, որը 2016թ. համեմատ ավել է 2000-2600-ով».*[55]

Փաստաթղթային ձևակերպումներն ու փորձագիտական կարծիքները, ինչպես այլ համայնքներում, այստեղ ևս որոշակի հակասության մեջ են, սակայն, ի տարբերություն նախորդ դեպքերի, այստեղ արդեն առաջնային է կամ կարող է առաջնային դառնալ բնապահպանական գործոնը:

«Անորոշությունը Վայքում արտահայտված է: Հիմա հարկերը բարձրացրել են. ես տղաներին ասի գրեք 13 տառը՝ «շտապ վաճառվում է», թողնեք, գնանք: Եթե ուզում ես հարկերը 4 անգամ ավելացնես, ինչ զարգացման մասին է խոսքը:

Երկրորդ՝ հանքարդյունաբերություն. Վայքի հանքը որ սկսեն շահագործել՝ նոր տերերը Դոմինիկյան Հանրապետությունից են, կողքը ուրան կա, եթե բացեցին, ուրանի ակտիվացում է լինելու ու մեր ըստեղ ապրելը անիմաստ է դառնում:

Տուրիստը տեսավ որ ըստեղ խնդիր կա, չի գա: Սարքերով են գալիս, նայում ռադիոակտիվությունը, թողում էթում. ճապոնացին, Հոնգկոնգի, Չինաստանի ժողովուրդը: Իմ մոտ քանի անգամ սարքով մտել են, պարունակությունը նայել, թողել գնացել են: Նրանք գալիս են որպես

[54] Վայք համայնքի տեղական տնտեսական զարգացման պլան, էջ 3:
[55] Նույն տեղում, էջ 8:

էկոլոգիապես մաքուր տարածքներ: Դա չեղավ, նա չի գա»: (Շ. Միքայելյան, փորձագիտական հարցում, Վայոց ձորի մարզ):

Համայնքների փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական հարցումների արդյունքները թույլ են տալիս պնդել, որ չնայած վերջին տարիներին համայնքների խոշորացման քաղաքականությանն ու զբոսաշրջության զարգացումը որպես գերակա ուղղություն հռչակելուն, դեռևս առկա են խնդիրներ, որոնք վերաբերում են առաջին հերթին հետազոտական հարցադրմանը, այն է՝ համայնքահենության ու մադակենտրոնության չափանիշների ներառմանը համայնքային փաստաթղթեր ու միաժամանակ դրանց կատարման ապահովմանը:

Համայնքներում (այս առումով, նախընթաց ակտիվ զբոսաշրջային փորձառությամբ պայմանավորված, համեմատաբար ավելի լավ վիճակում են Արենին ու Դիլիջանը) *խնդիրներ առկա են տարբեր մակարդակներում.*

- ✓ ներուժի ու հնարավորությունների քարտեզագրում,
- ✓ համայնքի զարգացման՝ մարդակենտրոնության դիտանկյունից մշակված մեթոդաբանության ու փաստաթղթերի առկայություն,
- ✓ մասնակցայնության ապահովում որոշումների կայացման գործընթացին,
- ✓ համայնքներում կրավորականություն ու դրա հաղթահարման հնարավորություններ,
- ✓ համայնքի աշխատակազմում՝ որոշ դեպքերում մասնագետների ակաս և այլ բարդություններ:

Ամփոփ ձևակերպելու դեպքում կարող ենք ասել, որ համայնքահենության ու մարդակենտրոնության սկզբունքները համայնքային տարբեր փաստաթղթերում ներկայացված են մասամբ, որոշ դեպքերում՝ չունեն տեսական-մեթոդաբանական հիմք, ավելի շատ արդյունք են համայնքային ծառայողների անձնական ակտիվության ու նախաձեռնությունների:

5. Եզրակացություններ

ՀՀ-ում համայնքների խոշորացման գործընթացը և զբոսաշրջության զարգացումը ապահովող օրենքների, հայեցակարգերի, ռազմավարությունների, ինչպես նաև համայնքային փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց

բացահայտել ինչպես դրական զարգացումներ, այնպես էլ տարբեր մակարդակի հիմնախնդիրներ:

Դրանց հաղթահարումը կարևոր է համայնքների արդյունավետ զարգացման, զբոսաշրջային ներուժը համայնքահեն ու մարդակենտրոն բաղադրիչի ուժեղացմանը ծառայեցնելու, համայնքի բնակիչների ինստիտուցիոնալ մասնակցայնությունն ապահովելու տեսանկյուններից:

- Խնդիրներ բացահայտվեցին հայեցակարգերում, ինչպես նաև օրենքներում («Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ», այլ փաստաթղթեր):
- «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես, 2018թ. կատարված փոփոխություններում Զբոսաշրջության կոմիտեի լիազորությունների թվում կան այնպիսիք (հետազոտություններ, ուսումնասիրություններ, Միջազգային ծրագրերի նկատմամբ վերահսկողություն, իրագործման և համակարգման գործառույթների զուգակցում, այլ), որոնք կամ պետք է վերապատվիրակվեն կամ փոխվեն՝ օրենսդրական նախաձեռնությունների միջոցով:
- ՀՀ-ում կարիք կա «Զբոսաշրջության զարգացման» նոր հայեցակարգի կամ գործողը պետք է ենթարկվի արմատական փոփոխությունների: Հստակեցման կարիք ունեն հատկապես հասկացությունները, որոնք բովանդակային տեսանկյունից հակասության մեջ են համայնքահեն ու մարդակենտրոն զբոսաշրջության զարգացման դրույթների հետ: Միաժամանակ, հայեցակարգի այլ կետեր նույնպես պետք է վերանայվեն ու հստակեցվեն զբոսաշրջության զարգացման արդի միտումների հաշվառմամբ:
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ 2019թ. սեպտեմբերից ուժի մեջ մտնող հոդվածը սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները զբոսաշրջության զարգացման բնագավառում: Փորձագիտական հարցումներն ու անհատական խորացված հարցազրույցները, այդ թվում՝ խոշորացված համայնքների աշխատակազմերի քարտուղարների հետ, ցույց տվեցին, որ առկա են խնդիրներ այդ լիազորությունների իրականացման առումով:
- Լուրջ մտահոգություններ կան հատկապես համայնքային զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի վարման, ինչպես նաև զբոսաշրջության վարչական ռեգիստրի հետ կապված:
- Հետազոտության ավարտի դրությամբ (2019թ.ապրիլ) դեռևս ապահովված չէր անհրաժեշտ փաստաթղթային, մեթոդական ու խորհրդատվական բազան: Որոշ համայնքներում լուրջ խնդիր է մասնագետների առկայությունը, բոլոր համայնքներում՝ վարձատրությունը: Հիմնական առաջարկությունները, որ բացահայտվեցին, վերաբերում

են *մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ կազմելուն, որոնք կօգնեն միասնականացված մեթոդաբանությամբ համայնքային ներուժի, այդ թվում՝ զբոսաշրջային ներուժի քարտեզագրմանը, հանրայնացմանն ու համայնքի զարգացման խնդիրներին ծառայեցնելուն:* Կա նաև մասնագետների վերապատրաստումների անհրաժեշտություն: Այս խնդիրները կարևոր են հատկապես զբոսաշրջությունը որպես գերակայություն դիտարկելու համատեքստում:

- Համայնքային փաստաթղթերում, չնայած զբոսաշրջության զարգացման դրույթների ներառմանը, որպես խնդիր պետք է դիտարկել մի կողմից՝ միասնական մեթոդաբանության բացակայությունը, մյուս կողմից՝ ձևակերպումների ընդհանուր լինելը, որոնք չեն կոնկրետացվում ու հստակեցվում մասնակցայնության, համայնքահենության ու մարդակենտրոնության տեսանկյունից:
- Խոշորացված, բազմաբնակավայր համայնքներում բավարար չափով չեն ներկայացվում յուրաքանչյուր կոնկրետ բնակավայրի հնարավորությունները, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման հնարավոր ու իրական ազդեցությունները համայնքի և կոնկրետ բնակավայրի վրա:
- Բավարար չափով չեն մանրամասնվում թիրախային ցուցանիշները, չի ներկայացվում, թե կոնկրետ ինչպես, ինչ գործիքների օգնությամբ ու մեթոդաբանությամբ են չափվելու ցուցանիշները (մասնավորապես, անհասկանալի են մնում ա. յուրաքանչյուր կոնկրետ համայնք զբոսաշրջիկների այցելության ցուցանիշները և բ. Դրանց հաշվարկման մեխանիզմները, մեթոդներն ու տեղեկատվության աղբյուրները):
- Բավարար չափով չեն ներկայացվում ներհամայնքային, միջբնակավայրային համագործակցության մեխանիզմները, իսկ եթե դրանք չկան, դրանց ձևավորման սկզբունքները: Նույն կերպ, բավարար չափով չեն ներկայացվում տարբեր բնակավայրերի քաղաքացիական ակտիվ խմբերի միջև համագործակցության մեխանիզմները:
- Ծրագրերում հստակ չեն ներկայացվում մասնակցայնության մեխանիզմները. ովքեր են մասնակցում զբոսաշրջային ծրագրերի կազմմանը, ինչպես են որոշվում առաջնահերթությունները, ծրագրերի ընդունումից հետո ինչպիսին է ընթացիկ քննարկումների համակարգը:

6. Առաջարկություններ

Հիմնական առաջարկությունները, ելնելով վերոբերյալ հիմնախնդիրներից, հանգում են հետևյալին.

- ✓ Առաջիկայում նախաձեռնել (Զբոսաշրջության կոմիտե) օրենսդրական փոփոխություններ՝ Զբոսաշրջության կոմիտեի գործառույթների, իրավունքների

ու պարտականությունների հստակեցման, որոշ գործառույթների վերապատվիրակման նպատակով:

- ✓ Հնարավորինս արագ ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի փոփոխություններով նախատեսված՝ համայնքի ղեկավարի զբոսաշրջության ոլորտում լիազորությունների ապահովման մեթոդաբանական, փաստաթղթային բազան (*Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, մարզպետարաններ, համայնքապետարաններ, տեղական ու միջազգային կազմակերպություններ*):
- ✓ Լիազորությունների կատարման համար նախաձեռնել վերապատրաստումներ համայնքների՝ զբոսաշրջային ոլորտի պատասխանատուների համար (*Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, մարզպետարաններ, տեղական ու միջազգային կազմակերպություններ*):
- ✓ Համայնքների խոշորացման գործընթացը շարունակելու դեպքում հանրային քննարկումների առարկա դարձնել համայնքահեն, մարդակենտրոն բաղադրիչը, ինչպես նաև զբոսաշրջային զարգացման ներուժը այդ բաղադրիչների հետ զուգորդելու մեխանիզմները (*Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, մարզպետարաններ, համայնքապետարաններ, տեղական ու միջազգային կազմակերպություններ, քաղաքացիական ակտիվ խմբեր, տեղական նախաձեռնություններ)*:
- ✓ Մշակել համայնքի մարդկային, պատմամշակութային ներուժի ու այլ ռեսուրսների գրանցամատյանի վարման հստակ մեթոդաբանություն, ուղեցույցներ, հրատարակել ուսումնական ձեռնարկներ: Սա հնարավորություն կտա ակտիվացնել նաև մասնակցայնության ու քննարկումների ակտիվությունը արդեն համայնքների մակարդակում:

Հիմնական, ընդհանրացված առաջարկությունը հանգում է նրան, որ փորձագիտական շրջանակների, տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների, այլ շահագրգիռ անհատների ու կառույցների մասնակցությամբ պետք է մշակել ու շրջանառության մեջ դնել համայնքահեն, մարդակենտրոն զարգացման մոտեցումներն ու սկզբունքները կարևորող համայնքային զարգացման հայեցակարգ, որը պարտադիր հաշվի կառնի խոշորացված համայնքի յուրաքանչյուր բնակավայրի ներուժը և զուգակցվելով զբոսաշրջային ներուժի իրական գնահատման ու քարտեզագրման մեխանիզմների հետ, կապահովի համայնքների, այդ թվում՝ խոշորացված համայնքների ներդաշնակ ու համաչափ զարգացումը:

7. Օգտագործված փաստաթղթերի և ուսումնասիրությունների ցանկ

1. «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ» (Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման). http://www.mtad.am/files/docs/782.pdf:
2. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերին): http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1889&lang=arm:
3. ՀՀ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ (հաստատված է ՀՀ Կառավարության կողմից, 2008թ. փետրվարի 13-ին): http://mineconomy.am/media/2017/03/1454.pdf:
4. ՀՀ Կառավարության 2019թ. ծրագիր, Եր., 2019: http://www.gov.am/files/docs/3133.pdf:
5. ՀՀ Տավուշի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություն: http://tavush.mtad.am/development-plan/
6. ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության նախագիծ: http://vdzor.mtad.am/Zargrazm1/
7. Արենի համայնքի 2019թ. տարեկան աշխատանքային պլան: http://arpaareni.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
8. Արենի համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլան: http://arpaareni.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
9. Արենի համայնքի տեղական տնտեսական զարգացման պլան: http://arpaareni.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
10. Արենի համայնքի հնգամյա զարգացման ծրագիր: http://arpaareni.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
11. Վայք համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլան: http://www.vayk.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
12. Վայք համայնքի տեղական տնեսական զարգացման պլան: http://www.vayk.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
13. Վայք համայնքի զարգացման ծրագիր: http://www.vayk.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
14. Դիլիջան համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր: http://dilijancity.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
15. Դիլիջան համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլան: http://dilijancity.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
16. Դիլիջան համայնքի տեղական տնտեսական զարգացման պլան: http://dilijancity.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
17. Դիլիջան համայնքի 2019թ. բյուջեն: http://dilijancity.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
18. Կողբ համայնքի հնգամյա զարգացման ծրագիր: http://koghbhamaynq.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:
19. Կողբ համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլան: http://koghbhamaynq.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects:

20. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր. 2017-2022: http://www.gov.am/files/docs/2207.pdf:
21. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. ծրագիր: http://www.gov.am/files/docs/3133.pdf:
22. ՀՀ Օրենքը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ Օրենքում փոփոխություններ կատարելու մասին: http://parliament.am/legislation.php?sel=show&ID=6381&lang=arm:
23. Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»: Հոդվածը գործողության մեջ է մտնելու 27.09.2019թ.-ից: http://www.irtek.am/views/act.aspx?tid=154489:
24. Ուսումնասիրություն ՀՀ Վայոց ձորի մարզում համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման՝ ՀՀ կառավարության հայեցակարգի գործնական իրականացման վերաբերյալ, Եր., 2010: http://www.mtad.am/files/docs/600.pdf.
25. ՀՀ Վայոց ձորի մարզում համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկ: http://www.mtad.am/files/docs/597.pdf:
26. Վարչատարածքային բարեփոխումները Հայաստանում. Միջանկյալ զեկույց քաղված դասերի վերաբերյալ, Եր., 2017: http://mtad.am/hy/hayecakarger/:
27. Աշխատանքային տեղեկանք. Համայնքների խոշորացումը՝ որպես Հայաստանի վարչատարածքային բաժանման օպտիմալացման միջոց, Եր., 2013: http://www.mtad.am/files/docs/774.pdf:

Հավելված 1. Ամփոփ տեղեկատվություն հետազոտված համայնքների մասին

Վայոց Ձորի մարզ[56]

Վայք համայնք

Բնակչություն՝ *8347 մարդ: Վայք համայնքում ընդգրկվել են Ազատեկ, Արին, Զեղեա, Փոռ գյուղերը և Վայք քաղաքը: Բնակավայրի գազաֆիկացված է:*

[56] http://vdzor.mtad.am/about-communities/758/; http://vdzor.mtad.am/about-communities/764/:

Վայքի տարածքի հողային ծածկույթը խիստ աղքատիկ է: Քաղաքից հյուսիս-արևելք և հարավ-արևելք ընկած տարածքները ներկայացված են խիստ կտրտված թեք լանջերով, զուրկ են հողային ծածկույթից, իսկ մնացած տարածքներում եղած հողային ծածկույթը փոքր հզորության է և ներկայացված է բաց շականակագույն հողերով, հիմնականում խիստ էռոզացված:

Վայք քաղաքի և նրա գյուղատնտեսական հողերի ոռոգման համար հիմնականում օգտագործվում է Արփա գետի ջուրը: Վայքի մարզամշակութային օբյեկտներն են՝ 600 և 200 տեղանոց դահլիճներով մշակույթի պալատը, գեղարվեստի և երաժշտական դպրոցները, գրադարանը՝ 180 հազ. կտոր գրքով, 2000 տեղով մարզադաշտը:

Քաղաքում գործում են հյուրանոցներ, սրճարաններ, ռեստորան, հասարակական սննդի և կենցաղ սպասարկման օբյեկտներ: Ունի մեկ ավագ դպրոց, մեկ հիմնական դպրոց, մեկ վարժարան, դեղատուն, 2 մանկապարտեզ, կապի հանգույց:

Արենի համայնք

Բնակչություն՝ *11784: Արենի համայնքում ընդգրկվել են Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ բնակավայրերը: Արենին ունի զբոսաշրջության մեծ պաշար՝ պատմամշակութային բազմաբնույթ բարձրարժեք հուշարձաններ: Համայնքի վարչական տարածքում է գտնվում միջազգային նշանակության հուշարձան Նորավանքի համալիրը: Բազմաթիվ են նաև բնության հուշարձանները՝ ժայռեր, ջրվեժներ, անդնդախորը ձորեր: 2004 թվականից ի վեր, հոկտեմբեր ամսին Արենի գյուղում կազմակերպվում է գինու փառատոն: Այն դարձել է ավանդական և ակնկալվում են հետևյալ արդյունքները՝ փառատոնը կնպաստի միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև ներքին շուկայում Արենի համայնքի, որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջավայրի նկարագրի ձևավորմանը, զբոսաշրջության զարգացմանը, այդ թվում՝ Վայոց ձորի մարզը որպես գինեգործության բնօրրանի և միջազգային գինու ճանապարհի կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկի հանրահռչակմանը,*

Արենիում և հարակից համայնքներում հայկական ավանդույթների և մշակույթի պահպանությանն ու տարածմանը, Հայաստանի տարածքային տնտեսական համաչափ զարգացմանը:

Տավուշի մարզ

Դիլիջան համայնք

Բնակչություն՝ *2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը կազմել է 26,700 մարդ, որոնց 70%-ը քաղաքային բնակչությունն է, իսկ 30%-ը գյուղական: Դիլիջան համայնքում ընդգրկվել են Դիլիջան քաղաքային և Հաղարծին, Թեղուտ, Հովք, Գոշ, Աղավնավանք, Խաչարձան գյուղական բնակավայրերը: Դիլիջան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում, որի միջով անցնում է Երևան–Վրաստանի սահման միջպետական մայրուղին: Մայրաքաղաքից հեռավորությունը 99 կմ է: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 63,317 հա է, որից ավելի քան 50 տոկոսը «Դիլիջան ազգային պարկի» անտառային հողերն են: Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 18670 մարդ, որոնցից 50.8% տղամարդիկ են և 49.2%-ը՝ կանայք: Պաշտոնական գործազրկության մակարդակը կազմում է 6.4%, իսկ իրական գործազրկությունը 15.7% է: 2017 թ. դրությամբ Դիլիջանում գրանցված աշխատողների թիվը 8296 է, որի 33%-ը՝ հանրային ոլորտում: Բնակչության միջին տարիքը ըստ սեռի հետևյալն է. տղամարդիկ՝ 37 տարեկան, կանայք՝ 33 տարեկան: Դիլիջան համայնքի բնակչությունը 2013 թվականի համեմատ աճել է 15%-ով, ինչը պայմանավորված է մի շարք խոշորամասշտաբ նախագծերի իրականացմամբ, մասնավորապես, ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական*

կենտրոնի, «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցի և «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցի գործունեությամբ: 2017թ. գործում է նաև Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը, ինչը նույնպես դրական ազդեցություն կունենա բնակչության թվի վրա:[57]

Կողբ համայնք

Բնակչություն՝ *5970 մարդ (01.01.2016թ.ի դրությամբ): Կողբ համայնքը ներառում է Կողբ և Զորական գյուղական բնակավայրերը: Կողբ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելքում՝ Տավուշի մարզի նախկին Նոյեմբերյանի տարածաշրջանում՝ Երևան - Իջևան - Վրաստանի սահման միջպետական մայրուղու վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից 195 կմ է, մարզկենտրոն Իջևանից՝ 60, Բագրատաշենի սահմանային անցակետից՝ 20, Այրում երկաթուղային կայարանից՝ 17: Համայնքը տեղակայված է ծովի մակերևույթից 500-1950 մ բարձրության վրա՝ Գուգարաց լեռնաշղթայի լեռնաբազուկներին, Կողբ, Ոսկեպար և Դեբեդ գետերի ջրահավաք ավազաններում: Սահմանակից է Նոյեմբերյան, Այրում, Շնող, Հաղպատ համայնքներին, ինչպես նաև հյուսիսից՝ Վրաստանին, իսկ արևելքից՝ Ադրբեջանին: Զորականը նախկին Նոյեմբերյանի շրջանի Քորփլու (Հոկտեմբեր) գյուղն է, որի ներկայիս բնակիչները Նոյեմբերյանի շրջան են տեղափոխվել 1988թ դեկտեմբերին Ադրբեջանի Շամխորի շրջանի նախկին Չարդախլու գյուղից և բնակեցվել Քորփլու գյուղի տարածքում:*

Ռելիեֆը լեռնային է և բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրությունների փոփոխությամբ: Լեռնալանջերն անտառապատ են: Անտառկազմող ծառատեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին, դաժին, լորենին, հացին, թխկին, փռշնին և այլ ծառատեսակներ: Թփերից առավելապես հանդիպում են հոնին, սզնին, մասրենին, զկռենին, մոշենին, ցախակեռասը, կծոխուրը: Համայնքն ունի ընդարձակ ալպյան արոտավայրեր և խոտհարքներ:

[57]Դիլիջանի տեղական տնտեսական զարգացման պլան:

Հավելված 2. Հիմնական հետազոտական հարցադրումները

Մակարդակ 1. Պետական քաղաքականության փաստաթղթեր

1. Արդյոք համայնքների խոշորացման փաստաթղթերում *(ՀՀ Օրենքներ, կառավարության որոշումներ, այլ փաստաթղթեր)* ներառված են զբոսաշրջության խթանման դրույթները:

2. Եթե ներառված են, ապա որքանո՞վ են դրանք նախատեսում ա/ համայնքահեն զբոսաշրջության զարգացում և բ/ այդ ճանապարհով՝ համայնքների սոցիալ-մշակութային զարգացման, կազմակերպական ու ինքնակազմակերպական կարողությունների խթանում:

3. Ինչպե՞ս են տարբեր փաստաթղթերում «ներկայացված» համայնքները, վերջիններիս կարողությունները, հնարավորությունները, այդ թվում՝ զբոսաշրջությունը զարգացնելու տեսանկյունից:

Մակարդակ 2. Խոշորացված համայնքների փաստաթղթեր

4. Խոշորացված համայնքների զարգացման, գործունեության տարեկան ծրագրերում, այլ փաստաթղթերում ինչպե՞ս են ներկայացված համայնքահեն զբոսաշրջության զարգացման դրույթները:

5. Ինչպե՞ս է գնահատվում/գնահատված համայնքային զարգացման ներուժը, ինչպե՞ս է այն քարտեզագրվում/քարտեզագրված, ինչպես են ընտրվում/ընտրված զբոսաշրջության զարգացման մեխանիզմները:

6. Արդյոք ծրագրերում դրվա՞ծ են մասնակցայնության ու ներառականության չափանիշներ, համայնքի առանձին խմբերի (կանայք, երիտասարդներ, քաղաքացիական ակտիվ խմբեր, այլ) մասնակցության ծրագրեր, առաջարկություններ:

7. Ծրագրերում կա՞ արդյոք մարդակենտրոնության չափումը, եթե այո ապա ինչպե՞ս է այն դրսևորվում: Եթե ոչ, ինչպե՞ս կարելի է փաստաթղթերի միջոցով բացատրել այս չափման բացակայությունը:

8. Ինչպե՞ս են «դիրքավորված» մարդը, ընտանիքը, համայնքը որպես լոկալ մշակույթի կրող: Ինչպե՞ս են դիտարկվում որպես զբոսաշրջային ինդուստրիայի սուբյեկտ, այլ ոչ թե օբյեկտ:

9. Որքանո՞վ են այս մոտեցումները ներառված զբոսաշրջության զարգացման հայեցակարգերում, ծրագրերում, ծրագրային այլ փաստաթղթերում:

10. Ինչպե՞ս է հնարավոր փոխկապակցել ու փոխլրացնել զբոսաշրջության ու համայնքների խոշորացման ծրագրերը համայնքահեն, մասնակցային զբոսաշրջության զարգացումը խրախուսելու նպատակով:

11. Ի՞նչ կոնկրետ առաջարկություններ պետք է ներկայացվեն քաղաքականության, տեղական ինքնակառավարման, զբոսաշրջության զարգացման մակարդակներում՝ առկա խնդիրների լուծման/հաղթահարման նպատակով: